

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

(VII — VI դդ. մ. թ. ա.)

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

Յարդ գիտության մեջ անուշագիր է մնացել այն հսկայական դերը, որ խաղացել են երկու հիմնական կենտրոններում առաջ եկած հայկական ցեղային միությունները, որոնք սաղմեր էին հետագայում առաջացած հայկական պետական կազմավորումների¹։ Մի այլ տեղ մենք հայտնել էինք այն միտքը, որ ուրարտական պետության գոյության ժամանակաշրջանում նրա արևմտյան և հարավ-արևմտյան մասերում տիրապետող ազգային տարրը հայկական ցեղերն էին²։ սրանց անունով էլ Մշո դաշտը (հին հայկական Տարոնը) և Արևմտյան Տիգրիսի ու Եփրատ-Արածսի գետի ներքին հոսանքի հովիտը ուրարտական արձանագրություններում կոչվում է Արմե (մերթ՝ Ուրմե)։ Հենց այստեղ՝ Ուրարտուի և Ասորեստանի «Բարբարոս ծայրամասերի» ամենաթույլ օղակներում կազմավորվեցին հայկական ցեղային միությունները։ Արևմտյան Տիգրիսի և Արևելյան Տիգրիսի հովիտներում ընկած երկրների այդ գոտին՝ Արմե-Շուպրիան, Նաիրի-Խուբուշկիան և Արդինի-Մուսասիրը (ավելի ուշ հին հայկական Աղձնիք, Մոկք, Անձևացիք, Կորճայք և այլ գավառները) Սարգոն Բ-ի մ. թ. ա. 714 թվականի արշավանքից հետո անջատվեց Ուրարտուից։ Այդ երկրները վաղուց ընդգրկվել էին հայերի կազմավորման ընդհանուր ընթացքի մեջ։

Ռուսա Բ-ի թագավորության շրջանում (685—645) ուրարտական պետությունը կրկին դառնում է հզոր տերություն։ Բայց նրան չի հաջողվում վերամիավորել 714 թ. անջատված հարավի ծայրամասային երկրները՝ Արմե-Շուպրիան, Նաիրի-Խուբուշկիան և Արդինի-Մուսասիրը, և ուրարտացիների նվաճումները ուղղվում են դեպի արևմուտք՝ Փոքր Ասիա։ Սակայն շուտով նշված երկրները միավորվում են մեղացիների հետ և համատեղ հարվածներով երկու տերություններն էլ՝ Ասորեստանը և Ուրարտուն կործանում։

Մ. թ. ա. 1170—1160 թթ. Փոքր Ասիայից մուշքերի (փոյուզիացիների) և ուրումեացիների (արմենների) ներխուժումից հետո ստեղծվեց հայերի և նրանց ազգակից ցեղերի միությունը Ասորեստանի պետության մեջ մտնող Շուպրիա կամ Արմե երկրում։ Այն մոտավորապես XII դարից մ. թ. ա. հայտնի էր իբրև «Մուշքերի թագավորություն»։ Սկզբնական շրջանում այստեղ ապրող հայկական և այլ ցեղեր, ըստ երևույթին, Ասորեստանի հարկատուներն էին, սակայն հետագայում նրանք անջատվում են և պայքար մղում իրենց ինքնուրույնու-

1 Ս. Դ. Երեմյան, Рабовладельческое общество древней Армении (автореферат докторской диссертации), М., 1953.

2 Ս. Տ. Երեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 59—72։

թյան համար ոչ միայն Ասորեստանի, այլև Ուրարտուի դեմ: Իր հզորության շրջանում ուրարտական պետությունը, սկսած Նինուայի (810—786) ժամանակներից, արշավանքներ է կատարում Ուրմե կամ Ուրմեուխի (նույն Արմե-Շուպրիա) երկրի վրա, բայց այն հաջողվում է նվաճել միայն Արգիշտի Ա-ի օրոք (786—764): Արմե-Շուպրիան, սակայն, Ուրարտուին ենթարկվում է շուրջ 60 տարի (773—714): Շուտով նա ազատագրվում է և դառնում մ. թ. ա. VII դարում Մերձավոր Արևելքում բորբոքված բուռն իրադարձությունների մասնակիցը: Ասորեստանի թագավոր Սարգոն Բ-ի մ. թ. ա. 714 թ. արշավանքից հետո ուրարտական պետությունը առհավեալ գրկվեց Արևմտյան և Արևելյան Տիգրիսի հովտում գտնվող հարավային նահանգներից, և Ուրարտուի հարավային սահմանը տեղաշարժվեց հյուսիս, անցնելով Հայկական Տավրոսով:

Հայկական Տավրոսից հարավ Ուրարտուից անջատված երկրների մեջ, անկասկած, առաջատար տեղ է զբաղում Արմե-Շուպրիան, և դեպի այն էին ձրգտում Արևելյան Տիգրիսի հովտում ընկած տերիտորիաները՝ Նաիրի-Խուբուշկիա երկիրը, որն արդեն VI դարում (մ. թ. ա.) հայացված պիտի լիներ: Այդ ժամանակաշրջանում, ամենայն հավանականությամբ, Արևելյան Տիգրիսի հովտում լիթնիկական տիրապետող տարրը հայերին ազգակից մոկսիանների ցեղն էր (Moschenae—Plin., NH, VI, 10), որի մի մասը շարունակում էր ապրել Փոքր Ասիայում, Լիկիայի և Կարիայի միջև (Μοξιανῶν — Moxiani, Ptol., V, 2, 18): Թրակա-հայկական այդ ցեղերից էլ ծագում է Մեծ Հայքի տասնհինգ նահանգներից մեկի՝ Մոկքի (այժմ Մոկս) անունը: Մոկքի տերիտորիան բաբելոն-ասորեստանյան արձանագրությունների Խուբուշկիա երկիրն է՝ Հերոդոտի Պակտիկեն: Հերոդոտի Պակտիկեն անվանում է «արմենների երկիր» (Her., III, 93): Երանից հարավ-արևելք գտնվում էր Մատիենեն, ավելի ճիշտ, նրա անունը մասը (արևմտյան), որը մի ժամանակ զբաղվել էր Մանայի կողմից, այսինքն Մուսասիր երկիրը, Մեծ Զաբի վերին հոսանքում. Հերոդոտի ասելով՝ Հայաստանը տարածվում էր մինչև այդ երկիրը (Her., V, 49):

Հայկական ցեղերը Նաիրի-Խուբուշկիայից թափանցում են Ուրարտուի կենտրոնական շրջանը՝ ուրարտական պետության մայրաքաղաքի՝ Տուշպայի (Վան) քաղաքային տերիտորիան: Ժամանակի ընթացքում հայերն այստեղ բառնում են գերակշռող ժողովուրդ, այն աստիճան գերակշռող, որ նշված քաղաքային տերիտորիան, որն ընդգրկում էր Վանա լճի հարավ-արևելյան մերձսփյնյա շրջանը, ներառյալ Հայոց-ձոր (Խոշաբ) գետի հովիտը, սկսեց կոչվել «Հայոց ձոր»:

Արմե-Շուպրիայի տերիտորիայի բնապատմական բարենպաստ ուղայմանները նպաստեցին մուշքերի-ուրումեացիների արագ անցմանը նստակեցության և հողագործության: Այս ցեղերի մոտ առանձնապես լայն դարգադրում էր տալիս ձիաբուծությունը, և ձիերը շուտով դառնում են այդ երկրի կողմից ասորեստանցիներին տրվող հարկի հիմնական մասը³: Հայկական Տավրոսի հարավային լեռնաճյուղերի ալպիական մարգագետինները և ստորին ավազանի տափաստանային տարածությունները Արևմտյան Տիգրիսի հովտում նպաստում էին արոտավայրային անասնապահության դարգացմանը: Ասորեստանյան ժա-

³ Н. Б. Янковская, Некоторые вопросы экономики Ассирийской державы «Вестник древней истории» (այսուհետև՝ ВДИ), 1951, № 1, էջ 38:

մասնակազրությունները հաղորդում են նրանց կողմից այդ երկրի խոշոր և մանր եղջերավոր անասուններ տանելու մասին⁴:

Բայց հատկապես մեծ զարգացում է ստանում պղնձահանքերի, ապա և երկաթահանքերի մշակումը: Հայկական Տավրոսի ընդերքը արդեն այդ ժամանակ հայտնի էր իր հանքային հարստությամբ: Մուսասիրից և Դամասկոսից հետո պղնձի պաշարներով աչքի էին ընկնում Կարքեմիշը և Շուպրիան⁵: Բայց այդ երկիրը աչքի էր ընկնում, մանավանդ, կապարի պաշարներով և «այդ առումով անհամեմատելի է մյուս երկրների հետ: Հնարավոր է, որ այստեղ եղել են նաև անագի հանքեր»⁶: Ասորեստանցիները դեպի Շուպրիա ձեռնարկած իրենց արշավանքների ժամանակ տեղական արքայիկների գանձարաններում հանդիպում էին նաև ոսկու և արծաթի: Այս բոլոր փաստերը հնարավորություն են ընձեռում ենթադրելու, որ Թաբալի նման Շուպրիան ևս իր տերիտորիայում ուներ «Հանքանյութերի արդյունահանմանը մասնագիտացած երկրագործական-անասնապահական շրջաններ, որոնց ասորեստանցիները չէին կարող դցել իրենց ձեռքը, քանի որ Շուպրիայի բնակավայրերը գտնվում էին անմատչելի լեռներում»⁷:

Մինչև օրս էլ հայտնի են Արղանա-Մադենի երկաթահանքերը Հայկական Տավրոսի ծայր արևմտյան և հարավ-արևմտյան լեռնաճյուղերում, այսինքն՝ Արմե երկրի բուն կենտրոնում (ասորեստանյան աղբյուրների նախկին Ալզի-Պուրուլումզի երկիրը): Պատահական չէ, որ Շուպրիայի հարկերի մեջ հաճախ հիշվում է երկաթը⁸:

Հայկական լեռնաշխարհի երկրների միջև Արմե-Շուպրիա երկիրը ամենից արագ է անցնում բրոնզի զարգացած արտադրությանը: Վերջինս կենտրոնացած էր բարձր լեռներում: Մետաղագործության զարգացումը նպաստեց բարձր լեռնային անասնապահական շրջաններին՝ ինքնապարփակ զարգացման մակարդակից անցնելու դեպի ինտենսիվ երկրագործությունը:

Երկրագործության արագ զարգացումը բնակչությանը կենտրոնացնում էր դաշտավայրերում և հարթավայրերում: Այս ժամանակաշրջանում Վանա լճի առափնյա շերտին զուգընթաց մեծ նշանակություն են ստանում հարբերդի դաշտի ջրարբի հարթավայրը և Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքների հովիտները: Սրանք դառնում են զարգացած գյուղատնտեսական ու կուլտուրական լույսերի մշակման կենտրոններ: Երկաթի յուրացման հետ սերտորեն առնչվում էր արհեստական ոռոգման ջրովի հողագործության զարգացումը: Զարգանում են նրա այնպիսի ճյուղերը, ինչպիսիք էին խաղողագործությունը և այգեգործությունը: Երկաթի լայն օգտագործման և երկրագործության զարգացման ժամանակների համար Արմե-Շուպրիա երկրի վերաբերյալ տեղեկություններ ենք քաղում ասորեստանյան թագավոր Աշուրնասիրպալ Բ-ի (884 — 859) ժամանակազրույթություններից: Սրանցից իմանում ենք, որ այդ երկրում ապրող մուշքերը նրա ժամանակ նստակյաց երկրագործներ էին, որոնք պարապում էին խաղողագործությամբ և գինեգործությամբ, ինչպես նաև անասնապահությամբ:

4 Նույն տեղում, էջ 42:

5 Նույն տեղում, էջ 37:

6 Очерки истории техники Древнего Востока, էջ 84 և 170:

7 Н. Б. Я н к о в с к а я, նշվ. աշխ., էջ 29, 35:

8 Նույն տեղում, էջ 38:

9 Նույն տեղում, էջ 36:

և մետաղամշակությամբ: Կադմուխի և Մուշքու երկրներից ստացված հարկերի մեջ հիշատակվում էին բրոնզե անոթներ, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, գինի¹⁰:

Արմե-Շուպրիայի միջոցով ուրարտական պետությունը մասնակցում էր հյուսիս-սիրիական քաղաքների վարած երկաթի տարանցիկ առևտրին. դրա համար էլ այդ տերիտորիան գառնում է Ուրարտուի նվաճողական նկրտումների առարկան: Արմե-Շուպրիան Արևելքի երկրների մեջ առաջիններից մեկն էր, որ անցավ երկաթի օգտագործմանը: Այն ժամանակ երկաթը համարվում էր ստրատեգիական կարևորագույն հումք, դրա համար էլ այդ երկիրը հյուսիս-սիրիական և արևելա-փոքրասիական քաղաք-պետությունների հետ միասին վերածվում է կռվախնձորի՝ Ասորեստանի և Ուրարտուի միջև: Այդ հանգամանքը արագացրեց նախնադարյան-համայնական հարաբերությունների քայքայման և պետականության տարրերի սկզբնավորման ընթացքը՝ այստեղ ապրող հայկական ցեղերի միջև:

Ինտենսիվ երկրագործության և անասնապահության, արհեստների, փոխանակության զարգացումը ավելի են ուժեղացնում տոհմային օլիգարխիան, որը ժամանակի ընթացքում կանգնում է իր բոլոր ազգակիցների գլուխը: Հին հայկական արյունակից-ազգակցական ընտանիքի ներսում այդ ժամանակաշրջանում կատարվում էին մեծ տեղաշարժեր: Երկաթախոփ արորի տարածումը և վարելահողային երկրագործության զարգացումը նպաստում են արյունակից-ազգակցական մեծ ընտանիքից՝ գերդաստանից, մենամուսնական ընտանիքի անջատմանը, և արյունակցական կապերը աստիճանաբար իրենց տեղը զիջում են տերիտորիալ և տնտեսական կապերին: Այսպես, արյունակցական համայնքից ձևավորվում է գյուղական համայնքը՝ «շեն»-ը, որը մեր թվարկությունից առաջ VI—V դդ. գառնում է տիրապետող:

Խորացող սոցիալական անհավասարությունը հատկապես անդրադառնում է համայնքի վրա: Համայնքի ներսում երևան են գալիս հարուստ ու ընչազուրկ անդամներ: Ունեցվածքային շերտավորման հետ մեկտեղ նկատվում է սոցիալական շերտավորում. երևան են գալիս ազատ և ճնշվող համայնիկներ: Տիրապետող ռազմացեղային վերնախավը առանձնանում է իբրև հատուկ արտոնյալ խավ, որը կանգնում է համաքանական-ստրկատիրական պետության հատկանիշներով օժտված ցեղային միության գլուխը: Սակայն ժողովուրդը թեև սոցիալապես արդեն միասեռ չէր, համենայն դեպս օտարերկրյա ագրեսիայի դեմ հանդես էր գալիս որպես զորք-ժողովուրդ («աւրեար», ուրարտական euriela-ից)՝ իր ցեղային առաջնորդների գլխավորությամբ, որոնց առաջնորդում էր գերագույն առաջնորդ-զորապետը:

Արմե-Շուպրիայում դեռևս զորեղ էր տոհմային դեմոկրատիան: Այստեղ ապաստան էին գտնում Ասորեստանից և Ուրարտուից դժգոհ բոլոր տարրերը և առաջին հերթին ստրուկներն ու շահագործվող ազատ համայնիկ-երկրագործները: Այդ են վկայում մ. թ. ա. VII դարի ասորեստանյան արձանագրությունների տեղեկությունները Շուպրիայի մասին:

Արմե-Շուպրիա երկիրը ասսուրա-բաբելական աղբյուրներում նորից հանդես է գալիս այն իրադարձության կապակցությամբ, որ տեղի էր ունեցել Ասո-

¹⁰ D. D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia, I—II, Chicago, 1926—1927 (այսուհետև՝ ARAB), I, 442; И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИИУ), № 23, I, 69 (ВДИ, 1951, № 2, էջ 286).

րեստանում 681 թ.: «Բարեկոնյան ժամանակագրությունում» կարդում ենք հետևյալը. «Տերետ ամսվա 20-րդ օրը (այսինքն մ. թ. ա. 681 թ. նոյեմբեր-դեկտեմբերին) Սինախերիբին, Ասորեստանի թագավորին, խռովության ժամանակ սպանեց նրա որդին»¹¹: Ասարխադդոնի արձանագրությունները լրացնում են այս տեղեկությունը: Այնտեղ ասված է, որ նրա հայրասպան եղբայրները «լսելով իմ արշավի մոտենալու մասին, թողեցին իրենց հավաքած զորքերը և փախան հայտնի չէ թե ուր»¹²: Ավելի կոնկրետ տվյալներ են պարունակվում «Դիրք թագաւորութեանց շորրորդ»-ում (գլ. 19-րդ, 36—37).... «Եւ շուեաց գնաց, և դարձաւ Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց և բնակեաց ի Նինուէ: Եւ եղև մինչդեռ երկիր պագանէր ի տան Նեսրաքայ աստուծոյ իւրում, Ադրամելէք և Սարասար (Սարեցեր) որդիք նորա հարին զնա սրով, և ինքեանք զերծան յերկիրն Աւարառաւ. և թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա»¹³:

Հետազոտողները Ադրամելէք անվան տակ տեսնում են Արադնինիլին կամ Արադ-Նիլլին՝ Սինախերիբի որդիներից մեկին: Իսկ ի դեմս Շարեցերի (Սարասարի) ենթադրվում է 681 թ. (մ. թ. ա.) զորապետ էպոնիմ Նաբուշարուսուրը: Պարտություն կրելով թագավոր դարձած Ասարխադդոնից (680 — 669), մարդասպանները փախչում են Շուպրիա¹⁴:

Մովսես Խորենացու (Ա, իգ) տեղեկությունների համաձայն այն ժամանակ, երբ Ասորեստանում սպանվեց Սենեքերիմ թագավորը, հայերին կառավարում էր Սկայորդին: Խորենացին նշում է, որ «որդուց նորա Ադրամելէքայ և Սանասարայ («Սասնա ծռեր» էպոսում՝ Ադրամելէք և Սանասար — Ս. Ե.) եկին փախստական առ մեզ»¹⁵: Թե որտեղ է այդ «առ մեզ»-ը, իմանում ենք այդ պատմության շարունակությունից: Խորենացին հաղորդում է, թե Հայաստանում սպաստանած ասորեստանյան թագավորի սպանողներից «զմինն յարևմտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին, այս ինքն է զՍանասարն և ի սմանէ աճումն և բազմասերութիւն լեալ լցին զՍիմն ասացեալ լեռն»¹⁶: Հայկական էպոսը նույնպես հաղորդում է այդ իրադարձության մասին և Սանասուն կամ Սասուն դավառի անվանումը սերում է այդ Սանասարի անունից:

Այսպիսով, հայկական պատմական ավանդությունը նշում է, որ Քաղիրթ (այժմ Բաթման-սու) գետի վերին հոսանքում ընկած Սանասունքը կամ Սասունը այն երկիրն է, ուր ապաստան են գտել ասորեստանյան թագավորին սպանողները: Վերը մենք տեսանք, որ Արմե-Շուպրիան իսկական առումով համընկնում էր Սասուն լեռնային բարձրադիր գավառի տերիտորիային¹⁷:

Նշված դեպքը եզակի չէր: Շուպրիա էին քաշվում ոչ միայն քաղաքական փախստականները, այլև ընչազուրկ ժողովրդական զանգվածները: Ասորեստանի և Ուրարտուի ստրուկներն ու շահագործվող բնակչությունն իրենց համարապաստան էին գտնում լեռնային Շուպրիայի, այժմյան Սասունի գծվարա-

¹¹ ARAB, II, № 505; АВИИУ, № 63 (ВДИ, 1951, № 3, էջ 215).

¹² ARAB, II, № 505; АВИИУ, № 62 (ВДИ, 1951, № 3, էջ 215, примеч. 7).

¹³ Աստուածաշունչ (Դիրք թագաւորութեանց, Դ. դ. ԺԹ, 36—37), Վենետիկ, 1860, էջ 347.

¹⁴ Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946, էջ 10.

¹⁵ «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 70.

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ См. Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, էջ 112.

մատչելի կիրճերում: Ուրարտական ու ասսուրական ստրկատերերի համար այդ երևույթն ալյնքան սպառնալից ծավալ էր ընդունել, որ մինչ այդ միմյանց թշնամի երկու պետությունները պիտի ընդհանուր լեզու գտնեին ազատ Արմե-Շուպրիան համատեղ ջանքերով իրենց իշխանությունը ենթարկելու համար: Դրան առիթ ծառայեց ստրուկների և կախալ այլ մարդկանց հերթական փախուստը: Բարձրագիր Շուպրիայի դժվարամատչելի վայրերը¹⁸: Ինչ գնով էլ լինե՞ր՝ Ասորձստանը պետք է վերացներ իր թիկունքում գտնվող անհանգստության այդ մշտական օջախը, որպեսզի հնարավորություն ստանար պայքարելու ապստամբած Մեդիայի դեմ:

Ձմռան ամենաթունդ պահին, մ. թ. ա. 673 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, Ասարխադգոնը արշավանք ձեռնարկեց դեպի Շուպրիա: Այդ ժամանակ Ասարխադգոնը բարեկամական հարաբերությունների մեջ էր գտնվում Ռուսա Բ-ի հետ, որի օգնությամբ էլ, հավանաբար, նվաճեց Արմե-Շուպրիան և արչունալից դատաստան տեսավ փախստական ստրուկների նկատմամբ:

Ըստ երևույթին Արմե-Շուպրիայի հնազանդության բերված ցեղապետը պարտավոր էր հունձնել փախստականներին: Ասարխադգոնին վերադարձվեցին ոչ միայն նրա հպատակները: Նա Ռուսա Բ-ին հանձնեց Ուրարտուից հեռացած փախստականներին, որ ապաստան էին գտել Արմե-Շուպրիայում:

Աշշուր աստծուն ուղղված Ասարխադգոնի ռեյցացիայում, որ բովանդակում է 673 թ. (մ. թ. ա.) Շուպրիա կատարած արշավանքի նկարագրությունը, պատմվում է փախստական ստրուկների և համայնականների նկատմամբ տեսած դատաստանի մասին. «Փախստ[ականներին], որոնք թողել են իրենց տերերին և փախել Շուպրիա, ևս կտրեցի [...], նրանց զրկեցի քթից, աչքից և ականջից, [որպեսզի ոչ ոք] չփախչի ուրիշ երկիր, նրանց վրա սահմանեցի պատիժ, [.] վերադարձրի նրանց, յուրաքանչյուրին իր երկիրը և իրենց տերերին: [Նրանց տերերը լսեցին] և ուրախացան, ցնծացին, օրհնեցին իմ վեհապանծությունը»¹⁹: Այնուհետև տեքստը պատմում է փախստականներին Ռուսա Բ-ին հանձնելու մասին: «[Ինչ վերաբերում է փախուստական] ուրարտներին, որոնք փախել են Ուրարտուից Շուպրիա-[Ուր]սայր, Ուրարտուի թագավորը դրեւ է իրեն (այսինքն՝ Շուպրիայի թագավորին — Ս. Ե.) նրանց մասին, բայց նա չէր ունկնդրել նրա հրամանին, չէր համաձայնվել նրանց հանձնել, հանդգնաբար գրել էր նրան, պատասխանել ատելությամբ: [Դրանից հետո], ևս հույս զնելով Աշշուրի՝ իմ տիրոջ վրա, նվաճեցի Շուպրիան և նրա մարդկանց մատնեցի զերուծյան, քանի որ այն բանի համար, որպեսզի երդումները պահպանվեն, ինձ ճշմարտություն և արդարացիություն են պարգևել մեծ աստվածները. այդ մարդկանց մասին ևս հարցրել եմ, հարցաքննել, հետաքննել և հավաստիացել, ուրարտացի ոչ մի փախստականի ևս չեմ պահել, ոչ մեկին ևս չեմ թաքցրել, վերադարձրել եմ իր երկիրը»²⁰:

¹⁸ Մասսայական այս փախուստը, հավանաբար, կապված էր Մեդիայում տեղի ունեցած ապստամբության հետ: Մ. թ. ա. 673 թ. պարսիկն ապստամբում է մեդական ցեղապետ Քշաթրիտան և իր երկիրը հայտարարում անկախ: Դրանից հետո, ինչպես երևում է, տեղի է ունեցել ստրուկների և կախալ երկրագործների մասսայական փախուստ Ասորեստանից և Ուրարտուից դեպի Շուպրիա: Տե՛ս И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 266—273:

¹⁹ ARAB, II, № 606; АВИИУ, № 67 (к), ВДИ, 1951, № 3, էջ 220:

²⁰ ARAB, II, № 607; АВИИУ, նույն տեղում, էջ 221:

Այսպես նվաճվեց Արմե-Շուպրիան: Բայց Ասորեստանին նա երկարատև չենթարկվեց՝ շուրջ քսան տարի: Հարկեր ու տուրքեր տվող փոխարքայությունների և ենթակա երկրների ցուցակում, որ կազմվել էր Ասսուրբանապուլ (668 — 633) թագավորի օրոք, մինչև 652 թ. չկան այնպիսի երկրների անուններ, ինչպիսիք են Շուպրիան, Իլլուրան, Նաիրի-Խուրուշկիան և Մուսասիրը²¹: Ամենայն հավանականությամբ, գրանք Ասորեստանից անջատվել էին 653 թ. երբ ապստամբել էր Բաբելոնը և նրան էր միացել Մեդիան: Նրանցից Մուսասիրը անջատվել էր դեռևս մ. թ. ա. 674 թ.:

Հայկական պատմական ավանդություններում Ասորեստանի տիրապետության ժամանակաշրջանի վերաբերյալ պահպանված հուշերը, հավանաբար, վերաբերում են հենց այդ քսանամյակին, թեև նրանց մեջ հաղորդվող ժամանակագրական շրջանակները, նույն VII դարին վերաբերելով հանդերձ, որոշ չափով շեղվում են վերը նշվածից:

Հայ պատմական երկերում, Կտեսիասի և նրա անտիկ հետևորդների ազդեցությամբ, Ասորեստանի պատմությունը առավելապես կապվում է կիսաառասպելական-կիսապատմական թագուհի Սեմիրամիսի-Շամիրամի հետ: Խոսելով հայերի վրա ասորեստանցիների հաստատած տիրապետության մասին, «Մատեան Մարաբալ փիլիսոփայի Մծուրնացույ» երկը հաղորդում է, որ Շամիրամ թագուհու ժամանակվանից հայերին «...Ասորեստանեայց թագաւորքն տիրեցին մինչև ցմեռանելն Սենեքերիմայ (Սինախերբը, որը սպանվեց մ. թ. ա. 681 թ. — Ս. Ն.), ապա ապստամբեցին յԱսորւոց թագաւորացն ծառայութենէ»²²: Այդ նույն երկի մեկ այլ տարբերակում, որի հեղինակը անվանված է Մար Աբաս Կատինա, և որից օգտվել է Մովսես Խորենացին (Ա, Իա), հաղորդվում է, թե ասորեստանցիները Հայաստանին տիրել են Շամիրամ թագուհու ժամանակներից մինչև Պարույրի ժամանակները, որն ապրել է Սարգանապալի (Իմա՝ Աշուրբանապալի՝ մ. թ. ա. 668 — 633 թթ. — Ս. Ն.) օրոք²³:

Անուղղակի մի շարք տեղեկություններ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ Ասորեստանը փորձեր է կատարել դաշնակից սկյութացիների օգնությամբ նորից իրեն ենթարկել 653 թ. անջատված երկրները, բայց դրանք հանդեցրել են, ընդհակառակը, Մեդիայում և Հայկական լեռնաշխարհում սկյութների 28-ամյա տիրակալության հաստատմանը (մ. թ. ա. 652 — 624 թթ.)²⁴: Սկյութական տիրապետության հաստատումը Ասորեստանի հյուսիսային սահմաններում ասորեստանցիներին լուրջ անհանգստություն պիտի պատճառեր:

Ռուսա Բ-ն էլ իր հերթին սկյութական վտանգին դեմ-հանդիման ձգտում էր բարի-դրացիական հարաբերություններ պահպանել Ասորեստանի հետ: Ինչու 655 թ. նա դեսպաններ է ուղարկում Արբելա Աշուրբանապալի մոտ: Վերջինս իր արձանագրության մեջ հայտնում է, որ նրանք եկել էին «Իմ բարեհաջողությունը հարցնելու համար»²⁵: Ռուսա Բ-ի հաջորդը՝ նրա որդի Սարգուրի Բ-ն (645 — 635) Աշուրբանապալի արձանագրության մեջ հիշատակվում է միայն մեկ անգամ, 639 թվականի տակ՝ նրա կողմից ասորեստանյան թա-

²¹ АВНИУ, № 69, 71 (ВДИ, 1951, № 3, էջ 230—232, 234—235): См. также И. М. Дьяконов, *нշվ. աշխ.*, էջ 265—281.

²² «Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն», գլ. Ա, երևուն, 1939, էջ 2.

²³ Մ. Խորենացի, էջ 64:

²⁴ И. М. Дьяконов, *нշվ. աշխ.*, էջ 288—289:

²⁵ ARAB, II, № 871.

գավորին ողջույնով հանդերձ դեսպաններ ուղարկելու կապակցությամբ: Աշուր-
րանապալի արձանագրության համաձայն, Սարգուրի Գ-ն նրան հիմնում է «Իմ
տեր թագավորին» խոսքերով²⁶, որին իր հերթին Ասորեստանի թագավորը պա-
տասխանում է՝ «Քեզ, քո պալատին և քո երկրին թող խաղաղություն լինի: Այն
ժամանակվանից ինչ աստված [արքայական իշխանություն] քեզ տվեց [. . .
. . .], դու բարեկամ ես փնտրում [.], [այնպես որ] ես ուրախացա»²⁷:

Հստ երևույթին այդ թագավորից հետո ուրարտական դինաստիան անկում
է ապրում և սկյութները (հավանաբար հայերի հետ միասին) դառնում են կա-
յության տերը: Ահա այս ժամանակներին է վերաբերում Պարույր Սկայորդու
հիշատակությունը հայկական ավանդություններում²⁸:

Սարգուրի Գ-ից հետո մեզ հասել են ուրարտական արձանագրություններ
«Ռուսայի՝ Էրիմենայի որդու» հիշատակությամբ, սակայն ասորեստանյան աղ-
բյուրներում չկա հիշատակություն Էրիմենայի անվամբ թագավորի մասին, հա-
մենայն դեպս առայժմ մեզ հասած ուրարտական աղբյուրների մեջ մենք չու-
նենք նրա արձանագրությունները: Հավանաբար, իրավացի է Դ. Ա. Մելիքիշվի-
լին, որը Ռուսա Գ-ի թագավորության սկզբնական տարին համարում է մ. թ. ա.
625 թվականը²⁹: Կարելի է հնարավոր համարել, որ Սարգուրի Գ-ի մահվանից
հետո սկյութները Ուրարտուում հաստատել էին իրենց տիրապետությունը, և,
հնարավոր է, նա ընկել է հենց նրանց դեմ մղած պայքարում: Թագավորական
իշխանությունը Ուրարտուում կարող էր վերականգնվել միայն սկյութական
տիրապետության ոչնչացմամբ, որ տեղի ունեցավ 624 թ.³⁰ մեղացիների կող-
մից սկյութների թագավորության վերացմամբ: Հենց այդ ժամանակ էլ պետք
էր ուրարտական գահին նստեր Ռուսա Գ-ը, որն իրեն անվանում է «Էրիմենայի
որդի»: Այսպիսով, Ուրարտուում թագավորական իշխանության անկման և
սկյութների տիրապետության ժամանակը համապատասխանում է մոտավորա-
պես 635 — 624 թվականներին (մ. թ. ա.):

Բ. Բ. Պիոտրովսկին, հենվելով Մովսես Խորենացու հաղորդած տեղեկու-
թյունների վրա, ցույց է տվել, որ այդ ժամանակաշրջանում Արմե-Շուպրիայի
կառավարողը Պարույրն էր, Սկայորդու որդին³¹, Ասորեստանի, հավանաբար,
Ուրարտուի հետ կապված իրադարձությունների ակտիվ մասնակիցը:

²⁶ ARAB, II, № 834.

²⁷ АВНУ, № 79 (ВДИ, 1951, №3, էջ 243—244): Այս հատվածի թարգմանությունը
պատկանում է ուրարտագետ Հովհաննես Ղարադյոզյանին, ինչպես և մի շարք դիտողությունները,
որոնց համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

²⁸ «Սկայորդի» նշանակում է հավանաբար «սակի (այսինքն՝ սկյութի) որդի», որ ցույց
է տալիս, թե հայերի ցեղապետը միևնույն ժամանակ համարվել է և սկյութ, սկյութների ցեղա-
պետ: Անուղղակի տվյալները վկայում են, որ սկյութները եղել են նաև Արմե-Շուպրիայում: Հնա-
րավոր է, սակայն, Սկայորդի անվան և մի այլ ստուգաբանություն, որը ևս կապվում է սկյութ-
ների հետ: Հայտնի է, սկյութների իշպակա ցեղապետը, որի անունը նշանակում է կամ Aspaka՝
«ձիավոր» կամ Spaka՝ «չուն»: «Սկայորդին» կարող է լինել և S[pa]kay-ordi, -pa- վանկի հետա-
դա սղմամբ: Այս դեպքում Aspaka||Spaka-ն կապվում է Սասունի մասը կազմող «Ասպակունեաց
ձոր» դավառի անվան հետ, որը պետք է լիներ Արմե-Շուպրիայում իշխող «Ս[պա]կայորդու» դի-
նաստիայի կենտրոնը, և պիտի ենթադրել այժմ Քաղթիկ կոչվող գյուղի տեղում:

²⁹ Г. А. Меликишвили, Напри-Урарту, Тбилиси, 1954, էջ 321:

³⁰ См. И. М. Дьяконов, *н.д.* աշխ.

³¹ Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, էջ 21;
И. М. Дьяконов, *н.д.* աշխ., էջ 313:

Նախքան դրան անդրադառնալը, քննարկենք Ասորեստանի անկման հետ կապված իրադարձությունները:

Կիմերների և սկյութների արշավանքները և նրանց պայքարը Փոքր Ասիայում նշանակալից չափով թուլացրին Ասորեստանն ու Ուրարտուն և վերջիններիս ենթակա և նրանցից կախյալ ժողովուրդներին հնարավորություն տվին թոթափելու ասորեստանյան և ուրարտական լուծը: Դրանով պիտի բացատրել, վերջին հաշվով, Մեդիայի այդչափ մեծ հաջողությունները, այն հանգամանքը, որ նա հասավ մինչև Լյուդիայի հետ Ուրարտուի ունեցած սահմանները՝ Հալիս գետի մոտ: Մեդացիների այդ նվաճումներում մեծ դեր պիտի խաղային նրանց դաշնակիցները, այդ թվում՝ հայերը:

Մեդական թագավորության արտաքին նվաճումները հեշտանում էին Ասորեստանի դեմ Բաբելոնի նոր ելույթներով: Բաբելոնի թագավոր Նաբոպալասարը (626—605)³² դեռևս մինչև մ. թ. ա. 616 թ. ապստամբեց Ասորեստանի թագավոր Սինշարիշկունի («Սարակ», 629—612)³³ դեմ և պատերազմ սկսեց, որի ժամանակ մեդացիները բաբելացիների դաշնակիցներն էին³⁴: Ասորեստանի դաշնակցի դերում հանդես եկան Մանան և Եգիպտոսը:

Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության» հայերեն թարգմանության մեջ պահպանվել են տեղեկություններ, որոնք սկիզբ են առնում հելլենիստական բաբելոնյան պատմաբան Բերոսոսից (շուրջ 350 — 288 թթ. մ. թ. ա.)³⁵: Դրանց համաձայն, Բաբելոնի թագավոր Նաբոպալասարը մինչև Ասորեստանի դեմ հանդես գալը (այսինքն՝ մ. թ. ա. 616 թ. առաջ) կապ է հաստատել Մեդիայի թագավոր Կիաքսարի հետ³⁶ և դա հնարավորություն է տվել նրան արշավելու ասորեստանյան մայրաքաղաքներ Աշշուրի և Նինվեի վրա: Նաբոպալասարին հաջողվում է Կաբլինի տակ ջախջախել ասորեստանյան և մանայական զորքերին, որոնք միասին էին հանդես եկել³⁷: Դրանից օգտվում է Կիաքսարը: 616 — 615 թթ. ընթացքում նա գրավում է ամբողջ Մանան և այն միացնում մեդական պետությանը: Այդ ժամանակվանից ի վեր Մանայի թագավորությունը դադարեց գոյություն ունենալ: Մանան ավերվելուց հետո մեդական զորքերը 615 թվականին (մ. թ. ա.) անցնում են Զագրոսը և հենց նույն տարվա հուլիս-օգոստոս ամիսներին հյուսիսից մոտենում Աշշուրին. Ասորեստանի կրոնական և կուլտուրական այդ հնագույն կենտրոնը կողոպտվում և ավերվում է: Այսպիսով մեդական պետությունը ներգրավվեց բաբելա-ասորեստանյան պատերազմի մեջ, նախ իբրև Բաբելոնի դաշնակից³⁸, ապա և դառնալով ղեկավար և գերիշխող ուժ:

Մեկ տարի անց, 614 թ. Աշշուրի փլատակների վրա հանդիպեցին Կիաքսարն ու Նաբոպալասարը և «միմյանց միջև կնքեցին բարեկամություն և դա-

³² И. М. Дьяконов, *Узл. азбу.*, էջ 299, ծանոթ. 5 և «Հավելումը» գրքի վերջում:

³³ Սրա թագավորության մասին տե՛ս նույն տեղում. ծանոթ. 4 և «Հավելումը»:

³⁴ ARAB, II, № 1173—1174; АВИИУ, № 81, ВДИ, 1953, № 3, էջ 244:

³⁵ Եվսեբիոս Կեսարացի, *Ժամանակագրություն*:

³⁶ Եվսեբիոսի հայկական վերսիայում Կիաքսարը հանդես է գալիս Աթղահակ անվամբ, որ հին հայկական էպոսում մեդական թագավորի մականունն է:

³⁷ ARAB, II, № 1168; АВИИУ, № 81 (ВДИ, 1951, № 3, էջ 244); И. М. Дьяконов, *Узл. азбу.*, էջ 303—304:

³⁸ И. М. Дьяконов, *Узл. азбу.*, էջ 304:

շինք»³⁹, որն ամրապնդվեց Բաբելոնի թագավոր Նաբոպալասարի որդի արքայազն Նաբուգոդոնոսորի և Աստիագի դստեր ամուսնությամբ⁴⁰,

Վերջապես մ. թ. ա. 612 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Նինվեի տակ տեղի ունեցած երեք ճակատամարտերից հետո քաղաքը գրավվեց։ Սինշարիշկունը իրեն նետեց իր այրվող պալատի կրակների մեջ։ Նինվեն՝ հին աշխարհի բռնակալության և կեղեքման այդ հենարանը, առմիշտ ոչնչացվեց⁴¹։ 610 թվականին նվաճվեց ասորեստանցիների կարևոր հենակետը՝ Խառան քաղաքը, իսկ 605 թ., չնայած եգիպտական զորքերի գործոն օգնությանը, ընկավ ասորեստանցիների վերջին հանգրվանը՝ Կարքեմիշը, որով էլ առհավետ վերջ տրվեց Ասորեստանի պետությանը⁴²։

Անկասկած է, որ Առաջավոր Ասիայի շատ ժողովուրդներ, հատկապես Ասորեստանի հանդեպ ծայրամասային վիճակ ունեցողները, անմիջապես մասնակցություն են ունեցել պատերազմում, բայես Մեդիայի կողմնակիցներ⁴³։ Այս կապակցությամբ հիմնավոր է դառնում Մովսես Խորենացու մոտ պահպանված պատմական ավանդությունը՝ Ասորեստանի ավերմանը հայկական զնդապետ Պարույր Սկայորդու որդու ունեցած մասնակցության մասին, մի հանգամանք, որին առաջին անգամ ուշադրություն է դարձրել Բ. Բ. Պիոտրովսկին⁴⁴։

³⁹ ARAB, II, № 1174; АВИИУ, № 81 (ВДИ, 1953, № 3, էջ 246); Stéphanie Nicolas Adontz, Histoire d'Arménie, էջ 295—296։

⁴⁰ И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 306, ծանոթ. 1։

⁴¹ ARAB, նույն տեղում, АВИИУ, № 81, նույն տեղում, էջ 246—247; Nicolas Adontz, նշվ. աշխ., էջ 296; И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 306—308։

Ասորեստանի բռնապետական լծի տակ կեղեքվող ժողովուրդներից զիր և զրականություն ունեին երբայցիները, որոնք արտահայտել են իրենց ցնծությունը Ասորեստանի անկման առթիվ։ Հին կտակարանի «Մարգարէութիւն Նաւումայ» գրքում կարդում ենք. «Եւ արդ խորտակեցից զգաւզան նորա ի քէն, և զկապանս քո խղեցից (Ա, 13)։... Տօնեա զտօնս քո, Յուդա, հատս զուխտս քո. զի ոչ ևս յաւելցեն անցանել ի հնանալ. վախճանեցաւ՝ մաշեցաւ և բարձաւ» (Ա, 15)։ Էլ ավելի ցայտուն խոսքերով է բնութագրում Նավումի «Մարգարէութիւնը» մայրաքաղաք Նինվեի անկումը, որը նմանեցվում է պոռնիկին։

«Պոռնիկ գեղապանծ,—գրում է Նավումը,— զլուխ կախարդաց, որ վաճառէր զազգս ի պոռնկութեան իւրում, և զտոհմս կախարդանօք իւրովք։... և ցուցից ազգաց զամօթ քո, և թագաւորութեանց զանարդանս քո. և բնկեցից ի վերայ քո զպղծութիւնս և զաղտեղութիւնս քո, և արարից զքեզ խայտառակ։ Եւ եղիցի ամենայն որ տեսանիցէ զքեզ՝ իջանիցէ և ասասցէ. եղուկ դու Նինուէ, ո՞վ իցե, որ հեծիցէ վասն քո. ուստի՞ խնդրեսցուք քեզ մխիթարութիւն» (Գ, 5—7)։ Ասորեստանի լուծը թոթափած հրեա «մարգարէն» հաղորդում է, որ այժմ ստրկության հերթը հասավ ասորական մեծամեծներին. «և ի վերայ ամենայն պատուականաց նորա վիճակս արկանիցեն, և ամենայն մեծամեծք նորա ձեռակապովք կապեցին։ Եւ դու արբեսցիս և յիմարեսցիս, և խնդրեսցես քեզ ոտնկայ ի թշնամեաց...» (Գ, 10—12)։

Շատ պատկերավոր է տրված Նինվե մայրաքաղաքի ավերումն ու թալանը. «Դրունք քաղաքաց բացան և կործանեցան արքունիք, և ստացուածք յայտնեցան։... Եւ ջուրք Նինուէի իրրև զջուրս տաղանի. և նոքա փախեան ի քէն՝ և ոչ կալան գտեղի, և ոչ ոք էր, որ հայէր. յափշտակէին զարծաթ, յափշտակէին զոսկի, և ոչ գոյր չափ զարդու նորա, ծանրացան քան զամենայն սպասք նորա ցանկալիք (Բ, 6—10)։... ամենքին որ լուան զգոյժ քո՝ ծափս հարցեն ի վերայ քո. քանզի յո՞յր վերայ ոչ շողաւ շարութիւն քո հանապազ» (Գ, 19)։

⁴² ARAB, II, № 1183; АВИИУ, № 81 (նույն տեղում, էջ 247); И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 314—316։

⁴³ И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 313։

⁴⁴ Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946, էջ 14—26։

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանվել է Ասորեստանի անկման նկարագրությունը, որտեղ Կիաքսարը հանդես է գալիս Արբակ անվան տակ, ինչպես որ Կտեսիասի մոտ է։ Մովսես Խորենացին, սակայն, այդ պատմության մեջ հյուսել է նաև տեղեկություններ մեղացիների հետ դաշն կնքած հայերի՝ Ասորեստանի կործանմանը ունեցած մասնակցության մասին։

«Վերջին սոցա, որք առ Ասորեստանեայց թագաւորութեամբն և որք ի Շամիրամայ կամ թէ ի Նինոսէ՝ զմերս Պարոյր առ Սարգանապալլաւ»։ Կարդում ենք Մովսես Խորենացու մոտ (Ա, իա)։ Պատմիչի ասելով՝ այս Պարույրը «ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ գտանի Վարբակայ Մարի (այսինքն՝ մեղացի Վարբակը, Կտեսիասի Արբակը, այսինքն՝ Կիաքսարը — Ս. Ն.) բառնալով զթագաւորութիւնն ի Սարգանապալլայ»⁴⁵։

Կիսաառասպելական-կիսապատմական այդ տեղեկությունները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ Նինվեի դրոհի նախօրյակին Կիաքսարին է միանում Արմե-Շուպրիայի ցեղապետը։ Հայկական պատմական ավանդության համաձայն, այդ ցեղապետն էր «քաջ նախարար», «որդի Սկայորդույ Պարոյր»-ը։

Հերոդոտը հաղորդում է հետևյալը. «Նրբ ասորեստանցիների նկատմամբ տարած հաղթանակից հետո Կիաքսարը պաշարեց Նինվեն, հանդես եկավ սկյութների մի մեծ բանակ՝ Պրոտոթիոսի որդու, Մադիոս թագավորի ղեխավորությամբ»⁴⁶։ Ակներեաբար Հերոդոտի այդ տեղեկության մեջ իրար են խառնվել երկու իրադարձություն՝ սկյութական թագավորի, Պրոտոթիոսի որդի Մադիոսի կողմից կիմերների ջախջախումը 654 թ. որի մասին վկայություններ են պահպանվել Ստրաբոնի մոտ (1, 3, 21) և ինչ-որ մեկ այլ անձնավորության ղեխավորությամբ սկյութական զորքերի մասնակցությունը Նինվեի պաշարմանը մ. թ. ա. 612 թ., անձնավորություն, որին շփոթել են այս Մադիոսի հետ։

Ինչ անուն կարող էր կրել այդ անձնավորությունը։ Այդ հարցը պարզաբանելու համար հարկ է նշել այն կարծիքը⁴⁷, որ հայկական Պարույր (Paroyr) անունը ծագում է սկյութական անունից՝ ասորեստանյան հաղորդմամբ Partatua, իսկ հունական հաղորդմամբ՝ Πρωτοθύτης⁴⁸։ Սակայն, ինչպես նշվեց, ասորեստանյան աղբյուրների Պարտատուան ժամանակագրական նկատառումներով չէր կարող լինել Խորենացու նշած Պարույրը⁴⁹։ Պարույրը լավագույն դեպքում կարող էր լինել Մադիոսի՝ Պարտատուայի որդու կրտսեր ժամանակակիցը միայն։ Այսպիսով, տվյալ տեքստում Հերոդոտը վերոհիշյալ Պրոտոթիոսին շփոթել է, ըստ երևույթին, մի այլ Պրոտոթիոս-Պարտատուայի հետ, որը հին հայկական ավանդություններում հայտնի է Պարույր անունով։ Ուստի և Հերոդոտը 612 թվականի իրադարձությունների մասնակից է դարձրել ոչ թե նրան, այլ նրա որդուն՝ սկյութական Մադիոս թագավորին, որը ժամանակով

45 Մ. Խորենացի, էջ 64։

46 Her., I, 103. Հետազոտողները Հերոդոտի նշած Պրոտոթիոսին նույնացնում են ասորեստանյան աղբյուրների Պարտատուայի հետ և նրան համարում սկյութների թագավոր Իշպակայի Պարտատուայի (673—654) որդի։ Վերջինիս որդին Մադիոսն է (654—624), որը վերջնականապես ջախջախեց կիմերներին և Մեդիայում ու հարևան երկրներում հաստատեց սկյութների 28-ամյա տիրապետությունը։ Նրան սպանեց Կիաքսարը 623 թ.։ Այսպիսով, այդ Մադիոսը, Պրոտոթիոսի որդին, չէր կարող լինել 614—612 թթ. իրադարձությունների մասնակիցը։

47 Տե՛ս Գ. Դ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 217։

48 Her., I, 103.

49 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 313։

ավելի մոտ էր դրանց։ Այս նկատառումները թույլ են տալիս ենթադրելու, որ Կիաքսարին օգնության եկած «սկյութական» զորքը գլխավորել է ոչ թե Մադիոսը, Պրոսոթիոսի որդին, այլ հին հայկական աղբյուրների նշած Պրոսոթիոս-Պարույրը։

Մովսես Խորենացու (Ա, Իա) տեղեկության համաձայն, մարական թագավոր «Վարբակ»-Կիաքսարը «զբաղն մեր նախարար յանդուցանէ զՊարոյր, թագաւորութեան շուք և ձև նմա խոստանալով»⁵⁰։ Ապա պատմիչն ավելացնում է, թե մեղական թագավորը «զթագաւորութիւն ի Սարդանապալլայ յինքն առեալ՝ տիրէ Ասորեստանի և Նինուէի»։ Այնուհետև Մովսես Խորենացին թվարկում է հայ առաջին թագավորների անունները և այդ ցուցակը նա սկսում է Պարույրից։ «Իսկ մեր առաջին ի Վարբակայ Մարէ պսակեալ Պարոյր, որդի Սկայորդուց», — կարդում ենք պատմիչի գրքում։

Վերը բերված տեղեկություններն ու նկատառումներն իրավունք են տալիս ենթադրելու, որ Նինվեի ավերումից և ասորեստանյան պետության կործանումից հետո Կիաքսարը Պարույրին ճանաչում է Արմե-Շուպրիա երկրի թագավորի։

Հայկական ավանդությունները ճշմարտացի կերպով են արտացոլում պատմական իրականությունը։ Միայն Ասորեստանի անկումից հետո հայերն չէին լինում Կիաքսարի հիմնադրել մեզ հայտնի իրենց առաջին պետությունը։

Այսպիսով, Ասորեստանի անկման ժամանակաշրջանում Հայաստանում կառավարում էր «որդի Սկայորդուց» Պարույրը, որը մեղական «Վարբակ»-Կիաքսար թագավորին ցույց տված օգնության համար նրա կողմից ճանաչվեց Հայաստանի թագավոր։

Նորաստեղծ թագավորության առաջին տարիների լուսաբանման համար մենք հետաքրքրվում ենք ներկայացնում այսպես կոչված «Գեղի ժամանակագրություն» տեքստի վերջավորությունը, որը, ցավոք սրտի, շատ վնասված տեղեր ունի։

Մ. թ. ա. 609 թվականի տակ այդ «Ժամանակագրությունը» հաղորդում է, թե Նաբոպալասարը օգնության է գնում Խառանի կայազորին, որը պաշարվել էր ասորեստանցիների և դաշնակից եգիպտացիների կողմից։ Ասորեստանի թագավոր Աշուրուբալիտ Բ-ը, հավանաբար, վախենալով մեղական և բաբելոնական զորքերի նոր ուժերի շրջապատումից, նախօրոք թողնում է պաշարված Խառանը և հեռանում դեպի Բաբելոնի լեռնային շրջանը, որպեսզի այնտեղից շրջանցիկ ճանապարհով վերադառնա Կարքեմիշ։ Նահանջող ասորեստանյան

⁵⁰ Մ. Խորենացի, էջ 65։

⁵¹ Մովսես Խորենացին իմացել է, ըստ երևույթին, և այնպիսի աղբյուրներ, որոնք Ասորեստանի կործանումը կապում էին Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորի (604—562) հոր Նաբոպալասարի (626—604) հետ։ «Քանզի և որք ի հօրէն Նաբուգոդոնոսորայ զործք, զրեցան յիրենց յիշողութեանցն վերակացուաց», — գրում է Մովսես Խորենացին (Ա, Իա, էջ 66)։ Սակայն նա նախընտրել է «Վարբակ»-Կիաքսարի անվան հետ կապված վերսիան, անկասկած այն բանի համար, որ զա համահունչ էր հայկական ժողովրդական պատմական ավանդությանը։

Ըստ երևույթին բաբելական այդ վերսիան է բնկած հայ Անանուն հեղինակի տարեգրության հիմքում, վերսիա, որը Հայաստանի պատմությունը կապել է ոչ թե Մեդիայի, այլ Բաբելոնի հետ, ընդ որում Նաբուգոդոնոսորի ժամանակակցի դերում հանդես է գալիս Հայաստանի կառավարող Փառնավազը։ «Այս Փառնաւազ, — գրում է Անանուն, — հնազանդեալ Նաբուգոդոնոսորայ արքայի ի Բաբելոն, եւ ապա յայնմհետէ Բաբելացուց և Մարաց թագաւորքն տիրեցին մինչև ցԱղեքսանդր Մակեդոնացի, որ զամենայն տիեզերս հնազանդեցոյց ի ծառայութիւն» (Ս. Ե. Ե. Ե., գլ. Ա, էջ 7)։

թագավորը իդալա երկրում թշնամուն ճակատամարտ է տալիս, որի մասին հաղորդում է «Գեղղի ժամանակագրությունը»: Նաբոպալասարը, կարդում ենք այնտեղ, շարժվեց դեպի հյուսիս. [Ի]ծալա [երկիրը] նա բարձրացավ և շատ քաղաքներ [. . .] երկրներ, նա այրեց կրակով»: Այնուհետև վնասվածքներով լեցուն տեքստում հնարավոր է կարդալ. «Հենց այդ ժամանակ (ասորեստանյան — Ս. Ն.) զորքը (հասավ — Ս. Ն.) մինչև Ուրաշտու քաղաքի գավառին»⁵³, այսինքն՝ մինչև Ասորեստանի ծայր հյուսիսային սահմանները, որոնք, հավանաբար, հասնում էին մինչև Արևմտյան Տիգրիս գետը: Ամենայն հավանականությամբ, բաբելացիները այստեղ ջախջախել են ասորեստանցիների վերջին ուժերը, որից հետո «Ակադի թագավորը վերադարձավ իր երկիրը»⁵⁴: Իծալա սահանգից բացվում էր ճանապարհը դեպի Ուրարտուի նախկին տերիտորիայի այն հատվածը, որն այժմ գրավված էր Արմե-Շուպրիա հայկական պետական կազմավորման կողմից: Ըստ երևույթին, հետապնդելով ասորեստանյան թագավոր Աշուրաբալիտ Բ-ին, բաբելացիները 608 թ. ներխուժում են «ուրարտական» Բիթ-խանունիա գավառը⁵⁵:

Ի. Մ. Դյակոնովի և այլ հետազոտողների կարծիքով «Գեղղի ժամանակագրության» մեջ հիշատակված «Ուրաշտու քաղաքի գավառը» և «ուրարտական Բիթ-խանունիա գավառը» վկայում են, որ այդ ժամանակ ուրարտական պետությունը տակավին գոյատևում էր: Սակայն Վերին Միջագետքում այն ժամանակ առաջացած քաղաքական իրադրության վերլուծությունը թույլ է տալիս այլ կերպ մեկնաբանել վերոհիշյալ տվյալները: Վերը մենք տեսանք, որ Իծալա (Իդալա) երկրից հյուսիս, Տիգրիս գետի հյուսիսային ափը գրավել էր Արմե-Շուպրիա երկիրը, որը մ. թ. ա. 714 թ. անջատվել էր Ուրարտուից, սակայն չի երևում, թե դրանից հետո այն երբևէ կրկին միացվել է Ուրարտուին: Դեռ հասած ուղղակի և անուղղակի տվյալները վկայում են, որ Ասորեստանի վերջնական ջախջախման տարիներին Արմե-Շուպրիայի տերիտորիայում գոյություն ունեւ հին հայկական պետական կազմավորում: Հավանորեն, ինչպես հետագայում Բեհիստունի արձանագրության բաբելական տեքստում⁵⁶, Ուրաշտուի տակ նկատի են ունեցել Արմինան⁵⁷, տվյալ տեքստում Ուրաշտու անվան տակ, անշուշտ, հանդես է գալիս Արմե-Շուպրիան իբրև հնագույն հայկական թագավորություն:

Սակայն այս հիշատակման և Բեհիստունի արձանագրության կերտման ժամանակի միջև ընկած է մի դարից քիչ պակաս ժամանակաշրջան: Այդ ժամանակ էլ տեղի է ունեցել Արմեի փոխարկումը Արմինայի, որն արդեն գրավում է ոչ միայն Արմե-Շուպրիան, այլ ողջ Ուրարտուի պետության տարածությունը կամ նրա մեծ մասը⁵⁸: Հարց է ծագում, թե ի՞նչ իրադարձությունների հետևանք

⁵³ ARAB, II, №№ 1183—1184; АВИИУ, № 81, նույն տեղում:

⁵⁴ Sté'u Nicolas Adontz, նշվ. աշխ., էջ 296:

⁵⁵ ARAB, II, № 1184; АВИИУ, № 81, նույն տեղում, էջ 296:

⁵⁶ И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 315—316 և գրքի վերջում եղած «Հավելումը»:

⁵⁷ նույն տեղում, էջ 348:

⁵⁸ Գ. Տիրացյան, Երվանդունիները Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 6, էջ 60—61:

⁵⁸ С. Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 11, էջ 34, 36 և И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 355

բով տեղի ունեցավ այս փոխարկումը, և ինչպիսին էր Ուրարտու պետության և ուրարտացիների հետագա գոյության հարցը:

* * *

Ակներև է, որ Արմինյան գոյություն է ունեցել նաև մինչև 520 թ. (մ. թ. ա.) և այն էլ ոչ թե մեկ տասնյակ տարի: Բավական է ասել, որ Հայաստանը (Արմենիան) հիշատակում է այնպիսի հին հեղինակ, ինչպիսին Հեկատեոս Միլետացին է (VI դ. մ. թ. ա.): Մեր տրամադրության տակ է գրավոր այնպիսի մի հուշարձան, ինչպիսին Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-ն է (գրվել է մ. թ. ա. IV դարում), ապա Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գիրքը (մ. թ. V դ.) և Անանուն հեղինակի ներածական զուխը Սեբեոսի (VII դ.) «Պատմության» մեջ:

Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-ում պահպանված տեղեկություններից իմանում ենք, որ մեղական թագավոր Աստիագեսի (584 — 553) ժամանակ Հայաստանը Մեդիայից կախյալ երկիր էր: Հայկական թագավորի անունը չի հիշատակվում, բայց շատ է խուսվում նրա որդի Տիգրանի մասին, որը Աստիագեսի պալատում աքեմենյան Կյուրոսի հասակակիցն ու զինակիցն էր: Պատմագրության մեջ «Կյուրոպեդիա»-ի այդ տեղեկությունները համարել են պատմական որևէ արժեքից զուրկ՝ ենթադրելով, թե Քսենոփոնը այդ գիրքը գրել է որպես զիդակտիկ մի վեպ իր ժամանակակիցների համար:

Սակայն ինչպիսի արժեքավորում էլ տալու լինենք գրավոր այդ հուշարձանին, համենայն դեպս Աստիագեսի և Կյուրոսի ժամանակ Հայաստանի, ինչպես և հայոց թագավորի ու թագավորական դինաստիայի հիշատակությունը մնում են որպես փաստ, որը չենք կարող հաշվի չառնել, մանավանդ, որ վերջին ժամանակների ուսումնասիրությունները հանգեցնում են «Կյուրոպեդիա»-ի արժանահավատության հաստատմանը: Հ. Մանանդյանը կարծում էր, որ «Կյուրոպեդիա»-ի հաղորդած տվյալները արժանի են ուշադրության: «Քսենոփոնի «Կյուրոպեդիա» վեպի այս տեղեկությունները, — գրում է նա, — միակ հիմնական վկայություններն են արմենների հնագույն անցյալի մասին վեցերորդ դարի առաջին կեսում (մ. թ. ա.): Տեղեկությունների ոճից և բովանդակությունից երևում է, որ վեպի այս մասում Քսենոփոնին կարող են աղբյուր ծառայած լինել տեղական ավանդությունները և հիշողությունները, որոնց նա հնաբավորություն ուներ ծանոթանալու իր և հույն զորքերի հայտնի նահանջի ժամանակ Արմենիայի միջով 401 — 400 թթ. (նախքան մեր թվ.)»⁵⁹: Ի. Մ. Դյակոնովը նույնպես կարծում է, որ «Կյուրոպեդիա»-ի Հայաստանին վերաբերող մասի հիմքում ընկած են մ. թ. ա. VI դարի պատմական իրական դեպքերը⁶⁰:

«Կյուրոպեդիա»-ի հաղորդած տեղեկությունների համաձայն, հայերը մեղացիների հարևաններ են⁶¹, իսկ հայերի երկիրը՝ Արմենիան Մեդիային ենթարկվող թագավորություն⁶²: Թշնամիների դեմ Մեդիայի մղած պատերազմի ժամանակ հայ թագավորը պարտավոր էր մեղական թագավորին տրամադրել իր զինվորական ուժի կեսը, այսինքն՝ 20.000 հետևազոր, և 4.000 հեծելազոր⁶³:

⁵⁹ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, էջ 39:

⁶⁰ И. М. Дьяконов, вступ. зам., էջ 350—351:

⁶¹ Xen., Cyrop., II, 1, 6.

⁶² նույն տեղում:

⁶³ նույն տեղում:

Հայոց թագավորը, իբրև մեղակալն թագավորի դաշնակից, նրան հարկ էր վճարում 50 տաղանդի չափով⁶⁴։ Իմանում ենք նաև, որ հայոց թագավորը պատերազմել է նաև Աստիագեսի դեմ, սակայն պարտություն կրելով պարտավորվել է հարկ վճարել, առաջին իսկ պահանջով տրամադրել զորքը և չկառուցել ամրություններ (հավանաբար լեռնայն ցրենքներում)⁶⁵։

Այդ նույն տվյալներից իմանում ենք, որ թագավորի շուրջ համախմբված էր վերնախավը՝ «պատվավոր հայերը»⁶⁶։ Ուշագրություն արժանի է նաև հետևյալ տեղեկությունը։ Կյուրոսի այն հարցին, թե «որքան են քո զորքերը և ինչքան դու դրամ ունես», հայոց թագավորը պատասխանում է. «Հայաստանում կա մոտ 8.000 հեծելազոր և 40.000 հետևազոր. իսկ դրամ՝ հոբս թողած գանձերի հետ միասին, տրծաթով հաշված. ավելի քան 3.000 տաղանդ»⁶⁷։ Վերջապես իմանում ենք, որ վերոհիշյալ թագավորը իր զինաստիպի առաջին դահակալը չէր։ Նա հիշատակում էր իր հորը, որը նրան թողել էր այդ ժառանգությունը։ Հայոց թագավորի որդիներն էին Տիգրանն ու Սաբարիսը, ընդ որում, նրանցից առաջինը, ինչպես ասվեց, Աքեմենյան Կյուրոսի մտերիմն էր։

Մովսես Խորենացու բերած տվյալները ոչ միայն շեն հակասում այդ տեղեկություններին, այլև նույնիսկ լրացնում են դրանք, հատկապես հիշատակում են Քսենոփոնի մոտ Անանուն մնացած հայոց թագավորի անունը՝ Երուանդ։ Խորենացին բերում է մարաց թագավորության ժամանակաշրջանից հայ իշխողների մի ամբողջ ցուցակ, որը հետևում է «առաջին պսակաւոր Պարոյրին», բայց այդ շարքում պատմականորեն պիտի հավաւտի համարել միայն երկուսին՝ Երուանդ Սակավակեացին և նրա որդի Տիգրանին⁶⁸։ Առաջինի մասին պատմիչը գրեթե ոչինչ չգիտե, բացի այն բանից, որ նա Տիգրանի հայրն է, իսկ Տիգրան Երուանդեանի վերաբերյալ բերում է մի պատմություն որոշ չափով նման այն պատմությանը, որ գիտենք «Կյուրուպեդիա»-ից, ըստ որի Տիգրանը մեղական թագավոր Աթահակի (Աստիագեսի) և Կյուրոսի ժամանակակիցն է։ Կյուրոսի և Տիգրանի մտերմությունը խիստ անհանդուրժանում է Աթահակին, և միանգամայն հիմնավոր. Տիգրանը, հենվելով Կյուրոսի վրա, ըստ ավանդու-

⁶⁴ Նույն տեղում։

⁶⁵ Նույն տեղում, II, IV (12), III, 1, 10, բերվում է հետևյալ գրույցը Կյուրոսի (այն ժամանակ Աստիագեսի գորահրամանատարի) և հայկական թագավորի միջև։ Կյուրոսը նրան հարցնում է. «Դե ասա ինձ, զու պատերազմել ես մեր կողմից իմ պապ Աստիագեսի և մեղացիների դեմ»։ Հայ թագավորը պատասխանում է. «այո»։ Կյուրոսը հարցնում է. «Իսկ պարտությունից հետո դու խոստացել ես, որ կվճարես հարկ, պահանջի դեպքում կտրամադրես զորք և շեռ ունենա ամրություններ»։

⁶⁶ Քսենոփոն, Կյուրուպեդիա, III, 1, Պատմվում է այն մասին, որ Կյուրոսը հավաքել է պարսկական և մեդական առաջնորդներին, «հրավիրել է նաև պատվավոր հայերին. ճանապարհասալներում գտնվող կանանց նույնպես նա շնորհացրեց և թույլ տվեց լսելու»։

⁶⁷ Նույն տեղում, III, I, 33, 2. Մանանդյանը հաշվել և ըույց է տվել, որ այդ թվերի համաձայն, հայ թագավորի հարստությունը հավասար էր մոտավորապես 12 միլիոն ոսկի ուրբում։ «Ընդունելով բարելոնական-պարսկական տաղանդի արծաթի կշիռը մոտ 32 կգ 640 գ, արմենների թագավորի հարստությունը իր կշռով հավասար կլինի $3000 \times 32, 640 = 97.920$ կիլ. արծաթ դրամի» (տե՛ս 2. Մանանդյան, Քննական տեսություն..., հատ. Ա, էջ 38—39)։ Հետևելով այս նույն հաշվարկումներին, մենք կարող ենք որոշել այն հարկի չափը, որ Հայաստանը վճարում էր մեդական թագավորին ($50 \times 32.640 = 1.632$ կգ արծաթ)։

⁶⁸ Մ. Խորենացի, Ա, իր, էջ 69։ Տե՛ս Գ. Տիրացյան, նշվ. աշխ., էջ 54—55։

թյան, ելնում է Աթղահակի դեմ, սպանում նրան և ազատագրում Հայաստանը մարերի գերիշխանությունից⁶⁹։

Հայ բանասիրությունը ցույց է տվել, որ Աստիագեսի և Կյուրոսի ժամանակակից Տիգրանի մասին գոյություն է ունեցել վիպական երկ, որի հատվածները պահպանվել են Հայաստանում գոյություն ունեցած հունարան դպրոցի բերականության անանուն մեկնողներից մեկի մոտ⁷⁰։ Մեղական տիրապետության վերացումը և Հայաստանի ազատագրումը կախյալ վիճակից սերունդների վրա այնքան ուժեղ տպավորություն է թողել, որ այդ իրադարձության շուրջը ստեղծվել են տարբեր ավանդություններ, որոնք կաղմել են հայկական էպոսի ամենահին շերտերից մեկը։ Դատելով Մովսես Խորենացու բերած հատվածներից, Տիգրան Երուանդեանի մասին եղած ավանդությունների էպիկական ցիկլը հետագայում միահյուսվել է «Մեծն Տիգրան»-ին, այսինքն՝ Տիգրան Բ-ին վերաբերող տեղեկություններին։ «Երուանդ» անունը Երուանդունի թագավորների տոհմանունն է և ծագում է իրանական *Aurvanta *Arvand անվանաձևից։ Հունարեն հաղորդվում է՝ Ἀροανδης, Ὀροντας, Ὀροντης ձևերով⁷¹։

Երուանդ անունով հայոց թագավորների դրնաստիայի մեղ հասած հայկական տեղեկությունները, մեծ մասամբ, կիսաառասպելական-կիսապատմական բնույթի են և կապվում են Հայաստանի երկու կենտրոնների՝ Վանի և Արմավիրի հետ. սակայն ավանդությունների հնագույն շերտը առնչվում է Վանի հետ։ Դրանք խիստ վերամշակված և իբրև հետագա վերապրուկներ պահպանվել են Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկում։ Թ. Արծրունին աղոտ տեղեկություններ է բերում Երուանդ թագավորի մասին, որը, ըստ ավանդության, «գայ բնակի առ ստորոտով լերինն ի գլուխս Տոսպ գաւառի, և կոչի զտեղին Երուանդական»⁷²։ Հետաքրքրական է նույնպես, որ Մատենադարանի հայերեն երկու ձեռագրերի հիշատակարաններում, որոնք վերաբերում են XVIII դարին, Վան քաղաքը անվանված է Երուանդաւան⁷³։

69 Մ. Խորենացի, Ա, իդ, էջ 72։

70 Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 129; Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 9, 221; Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հատ. Ա, էջ 42—43; Տե՛ս նաև Մ. Արեղյան, Հայ վիպական բանահյուսություն, Երկեր, Ա, Երևան, 1966, էջ 134—139։

71 A. Perikhanian, Une inscription araméenne du roi Artasès trouvée a Zanguéour (Siwnik), „Revue des études arméniennes (Nouvelles serie), t. III, Paris, 1966, pp. 26—27.

72 Թովմա Արծրունի, էջ 50։

73 № 5416 — պատարադի խորհուրդ, ժամանակ՝ 1749 թ., էջ 17բ—17ա։

Մեքաւ տետաւա այս խորհուրդի	Որ ամառաստան կոչի նախկին
Ի վասպուրականըն նահանգի	Շամիրասայ կերտեալ պօլսին
Որ է ի սահմանս Հայաստանի	Ս ր ու ա ն դ ա վ ա ն վերածայնի։
Ի յանառիկ մեծ դղեկին,	Որոյ անունն պարզ և յայտնի
	Տամեն առգլ աւծմ վան ասի,

№ 6013—Տօնացոյց, ժամանակ՝ 1710 թ., էջ 35ա—35բ։

Աւարտեցի գտուր գիրք, որ կոչի տօնացոյց... յամի բվոյ բրկչին ՈԶԹ, իսկ Հայոց մերում ՌՃՄԹ. ապրիկ ամսոյ մեկ ի դառն և ի նեղ ժամանակի, յորմէ յոյժ նեղիմք ի ձեռաց անօրինաց... Արդ ես Սարգիս դպիրս գծագրեցի զայս ի ֆաղաֆն Երուանդաւան, որ այժմս...։

Այս բնագրերը ինձ մատնացույց անելու համար խորին շնորհակալություն եմ հայտնում բանասեր Վաղդեն Հակոբյանին։

Այդ տվյալներից հավանական է դառնում, որ այն տերիտորիան, որտեղ նախապես գործել է Երուանդունի տոհմը, Վան քաղաքի շրջակայքն է իր Տոսպ գավառով (ուրարտ. Տուշպա) և նրան կից Հայոց ձորը:

Այս տեսակետից չափազանց կարևոր է, որ այդ շրջանի վայրերը պահպանել են Երուանդ անվանն առնչվող տեղանունները, որոնք հավանաբար վերաբերում են մեզ հետաքրքրող ժամանակին: Վերը տեսանք, որ ուշ շրջանի տեղեկություններում Տուշպա-Վանը կոչվում է Երուանդաւան: X դարում հիշատակվող Երուանդականք վայրը նույնիսկ պետք է փնտրել Վանի շրջակայքում, ամենայն հավանականությամբ, ժամանակակից Զրուանդանց գյուղի տեղում: Հիմք ունենք կարծելու, որ Արուանթունիք-Երուանդունիք գավառի անվանումը սկզբում տարածվում էր Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայի (Տոսպ) շրջակայքի ամբողջ տերիտորիայի վրա (ներառյալ նաև Ռշտունիք գավառը), բայց հետագայում (հավանաբար Արտաշիսյան դինաստիայի ղապտատուտից հետո), երբ Արտաշիսեան ավանը (ուրարտ. Թարիրիախինիյին) դառնում է առանձին կրոնական կենտրոն Արտեմիդեի (հայ. Անահիտ) պաշտամունքով (որտեղից և պիտի առաջանար Արտամետ անունը), նրան է անցնում շրջակա գավառակը, իսկ հետագայում նման առանձին վարչական միավոր է դառնում Դուկանք գյուղը իր շրջակայքով և այդպիսով միմյանցից բաժանվում են Վան քաղաքը իր գավառով, որը կոչվում է Տոսպ և Ռշտունիք գավառը իր Կավաշ կենտրոնով, որը հետագայում կոչվում էր Ոստան: Երուանդունիք անվանումը մնում էր միայն Հայոց ձոր (Խոշաբ) գետի հովտին՝ սկսած Իրշ գյուղից մինչև Օրդոք գյուղը: Նման վիճակում են ներկայանում մեզ Վան քաղաքը և նրա շրջակա տերիտորիան VII դարի «Աշխարհացոյց»-ում⁷⁴:

Այդ վայրերը կապված են Երուանդունիների դինաստիայի թագավորների պործունեության հետ այն ժամանակաշրջանում, երբ նրանք տակավին Այրարատի իշխողները չէին, այսինքն՝ աքեմենյան և մեդական ժամանակաշրջանում:

Հարց է ծագում, թե երբ է կազմակերպվել հայկական այդ պետությունը՝ Երուանդունիների գլխավորությամբ: Այդ հարցը ամենասերտ կերպով կապված է մի այլ խնդրի հետ, թե երբ է վերջնականապես կործանվել ուրարտական պետությունը, որովհետև հասկանալի է, որ հայկական պետության առաջացումը կարող էր տեղի ունենալ այդ իրադարձություններից հետո միայն և նրա հետևանքով:

Գիտության մեջ ընդունված տեսակետն այն է, որ ուրարտական պետության անկումը տեղի է ունեցել մ. թ. ա. VI դարի սկզբներին, 590 — 585 թթ.⁷⁵:

Սակայն ուրարտական թագավորական դինաստիայի անկման ժամանակի ու հանգամանքների մասին գոյություն ունի և այլ տեսակետ:

Մենք տեսանք, որ ուրարտական դինաստիան Բիաինիլիում պետք է ընդհատված լիներ սկյութների 28-ամյա տիրապետության շրջանում, մոտ 635 թ. (մ. թ. ա.): Մեդիայում թագավորական դինաստիան վերականգնվեց Կիաքսարի կողմից մոտ 624 թ. (մ. թ. ա.) սկյութներին չախջախելուց հետո միայն: Նշված ժամանակներին Ուրարտուի գահը, համաձայն Գ. Ա. Մելիքիշվիլու թվագրման,

⁷⁴ Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 51, 62:

⁷⁵ Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1963, էջ 115—116, И. М. Дьяконов, Последние годы Урартского государства по ассирио-вавилонским источникам, ВДИ, 1951, № 2, էջ 32 և հաջ.:

բարձրացավ Ռուսա Գ-ը, որն իրեն անվանում է էրիմենայի որդի։ Նրա դահակալության ժամանակը ըստ այդմ համարվում է մ. թ. ա. 624 — 610 թվականները։

Գիտնականների մեծ մասը գտնում է, որ մինչև Ռուսա Գ-ը մ. թ. ա. 620 — 605 թթ. թագավորել է էրիմենան։ Սակայն նրա մասին մեր տրամադրության տակ ոչ մի տվյալ չկա։ Ասորեստանյան աղբյուրները այդ անունով ուրարտական թագավոր չեն հիշատակում, իսկ ուրարտական արձանագրությունների մեջ էլ նրա անունով արձանագրություն չկա⁷⁶։ Միայն հայտնի է, որ Ռուսա Գ-ը իրեն անվանում է էրիմենայի որդի (Erimenahe)։

Ի. Ի. Մեշչանինովը⁷⁷ և Գ. Ա. Ղափանցյանը⁷⁸ ենթադրում են, որ էրիմենա անունով թագավոր գոյություն չի ունեցել, իսկ ուրարտերեն «էրիմենախե» կարող է նշանակել նաև «էրիմենայական» — «էրիմենա (Արմենիա) երկրի ցեղիդ»։ այս ենթադրությամբ Ռուսա Գ-ը ներկայանում է որպես հայկական գինաստիայի հիմնադիր՝ Տուշպայում։

Այս փաստը, ուրեմն, խոսում է այն ենթադրության օգտին, թե ուրարտական վերջին թագավոր Ռուսա Գ-ը (624—610), «էրիմենայի որդին» կարող էր ունենալ հայկական ծագում, և կրած լինել տրագիկոն ուրարտական «Երուաղ» անունը։ Նա պետք է ունենար նաև հայկական անուն (թերևս Երուանդ // «Արուանթ» կամ Երուաղ // Արուաղ), որը մեզ հայտնի չէ։

Այս տեսակետի համաձայն, ուրեմն, Ռուսա Գ-ը հանդես է գալիս որպես մի թագավոր, որը դեռ հավանաբար շարունակում էր կրել Ուրարտուի թագավորի տիտղոսը և ուրարտերենը ճանաչում էր որպես պաշտոնական լեզու։ Հաջորդ թագավորները հանդես են գալիս արդեն որպես Արմենիա-Հայաստանի թագավորներ, բայց բաբելացիները շարունակում են անվանել երկիրն Ուրարտու՝ «Ուրաշտու» ձևով, այնպես, ինչպես Երեմիայի «մարգարէութեան» մեջ 539 թ. մ. թ. ա. Հայաստանը նախկինի պես կոչվում էր «Այրարատ», այսինքն՝ «Ուրարտու»⁷⁹։

Ուրարտուի հենց կենտրոնում քաղաքական իրադրության այդքան անակրնկալ փոփոխման համար հող էին նախապատրաստել հենց իրենք՝ ուրար-

⁷⁶ Եթե ճիշտ է Ի. Մ. Դյակոնովը (Урартские письма и документы, М.—Л., 1963, էջ 34) հարմիր բլուրում գտնված սեպագիր սալիկներից մեկի վրա կարդում է m) E[r]-me-n[a] անունը, բայց նիշերը վատ են պահպանված, և մեր կարծիքով դժվար է պնդել, թե այդտեղ իսկապես «էրիմենա» է եղել գրված։

⁷⁷ И. И. Мещанинов, К анализу имени Эримена, «Язык и мышление», I, 1933, էջ 37։

⁷⁸ Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 225։ Ուշադրության արժանի են Գր. Ղափանցյանի դիտողությունները այն մասին, որ Երուանդունիների տոհմական անունն էր, բացի «Երուանդ»-ից, նաև «Երուաղ»-ը, որ Մովսես Խորենացու մոտ (Բ, լէ) հանդես է գալիս իբրև Երուանդի եղբայր և միևնույն ժամանակ իբրև Արմավիրի տաճարի պերագույն քուրմ։ Գր. Ղափանցյանը (նշվ. աշխ., էջ 219) այդ «Երուաղ» անունը մոտեցնում է ուրարտական «Ռուսա» ասորեստանյան հաղորդմամբ «Ուրսա» անվանը։ Գ. Ա. Մելիքիշվիլին էլ իր հերթին կարծում է, որ Մուսասիրի թագավոր Ուրգանայի անունը Ռուսա||Ուսա անվան տեղական ձևն է և որ նրա արմատը «Ուրգա» է (Գ. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 89)։ Անհրաժեշտ է նշել, որ վերջերս Անահիտ Փերիսանյանը (տե՛ս 71-րդ ծանոթագրությունը) «Երուաղ» անունը կապում է իրանական Rayavāza անվան հետ, որ մեղական միջնորդությամբ նորից կարող է կապ ունենալ «Ուրգա» անվան հետ։

⁷⁹ Պատուէր տուք յինչն Այրարատեան թագաւորութեանցն և Ասքանաղեան զնդին (Երեմիա, ՄԱ, 27)։

սական թագավորները: Ապստամբ ցեղերին խաղաղեցնելու և նրանց բիաինիլի վերաբնակեցնելու քաղաքականությունը հասցրեց բնակչության խայտաբղետության և ուրարտների կողմից գերակշիռ նշանակությունը կորցնելուն, մի երևույթ, որը արագացրեց հայ ժողովրդի կազմավորման սովորաբար ընթացքը:

Այսպիսով, մենք տեսանք, որ Արմե-Շուպրիայում մ. թ. ա. 652—612 թթ. ժամանակահատվածում թագավորում էր հայ-«սկյութական» ծագում ունեցող ցեղապետ Պարույրը, իսկ Բիաինիլիում մոտ 624 թ. սկսած կամ ամենաուշը՝ VI դարի սկզբներին իշխանության է գալիս հայկական Երուանդունի տոհմը: Այնուհետև Արմե-Շուպրիան և Բիաինիլին միավորվեցին և կազմեցին մի ընդարձակ հայկական թագավորություն, որը հայերի մոտ կոչվեց Հայք, իսկ հարևանների մոտ՝ Արմինա, Արմենիա: Հետագայում (520—517 թթ.) նրա տերիտորիան բաժանվեց երկու վարչական միավորների՝ սատրապությունների. հիմք ունենալով նախկինում գոյություն ունեցող երկու հայկական թագավորությունների տերիտորիան: Արմե-Շուպրիայի շուրջը համախմբված Հայաստանի գավառները, որտեղ երբեմն իշխում էր Սկայորգու գինաստիան, Քսենոփոնը անվանում է «Արևմտյան Արմենիա» (Xen., Anab., IV, 4, 4), որը համապատասխանում է ուրարտական արձանագրությունների Արմե կամ Ուրմե երկրին: Այս երկրամասից գեպի արևելք գտնվող Հայաստանը, որ ընկնում էր Վանա լճի ավազանում, Քսենոփոնը անվանում է «Արմենիա» (անգ., III, 5, 17, IV, 1, 3): Այս Արմենիան այն երկրամասն է, որտեղ հաստատվել է Երուանդունիների դինաստիան: Նշված տերիտորիան Ուրարտուի թագավորության կենտրոնը հանդիսացող Բիաինիլի երկիրն է (իր ընդարձակ իմաստով) Տուշաթա-Վան կենտրոնով:

Մեզ հաճած տեղեկությունների մանրազնին հետազոտությունը ցույց է տալիս, որ այս ուրարտական Բիաինիլի երկիրը անվանվել է նաև «Արամալի» / «Արմարիլի» (կամ «Արմիրալիու»), որ պիտի կապել նույն «արմե-արմեն» ցեղանվան հետ (*Aram-ayr-ili?): Նեղ իմաստով «Արամալի» կամ «Արմարիլի» է կոչվել Բիաինիլի երկրի հյուսիսային մասը, որը ուրարտական արքայորդիների բնակչության վայրն էր՝ Արբու և Ուար քաղաքներով: Պատահական սուգադիպություն չպետք է համարել այն փաստը, որ այս Արամալի-Արմարիլի երկրամասը հայ Արշակունիների թագավորության ժամանակաշրջանի Աղիո-վիտ և Առբերանի գավառներն են: Այստեղ էին ապրում Արշակունի սեպուհները՝ արքունի տան արքայորդիները (բացի գահաժառանգից, որը մնում էր հայոց Ոստանում՝ Արտաշատում), ուստի աղբյուրներում կոչվում է «երկիր սեպահական գնդին»⁸⁰: «Սեպուհական» (<*Սեպուհական, Seputhrakan), որից առաջացել է «Վասպուրական» անունը: Այս փաստերը ենթադրել են տալիս, որ Երուանդունիների տիրապետության ժամանակաշրջանում այս գավառների վրա (որոնք մի ընդհանուր տերիտորիա էին կազմում «Արամալի» կամ «Արմարիլի» անվան տակ) ժառանգական իրավունքները ուրարտական արքայական դինաստիայից արդեն անցել էին նոր գահ բարձրացած հայկական դինաստիային: Այդպիսով, կարելի է եզրակացնել, որ դեռևս ուրարտական դինաստիայի թագավորության ժամանակաշրջանում Բիաինիլի կենտրոնական երկրամասը ուրարտացիների կողմից անվանվել է նաև «Արամալի» կամ «Արմարիլի», որ «Արմինա» կամ «Արմենիա» անվան ուրարտական ձևը պիտի լինի:

⁸⁰ «Սերեոսի եպիսկոպոսի պատմություն», գլ. Ա, Երևան, 1939, էջ 5:

«Արամալի» կամ «Արմարիլի» ձևերը պիտի առաջացած լինեն հայերեն «Արամայր»-ից (*Արամաչդի? ← *Արամայնի//Արամանայ), որը ուրարտական «-իլի» վերջավորությամբ դարձել է Aram-ayr +ili: «Արամայր» ձևը պահպանվել է «Մատենան Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացւոյ» երկում, որը հատվածաբար պահպանվել է Սեբեոսի մոտ⁸¹: «Արամայր» անունը նույն «Արմալիր» քաղաքի անվան տարբերակն է և ավանդությունը կապում է այդ քաղաքի առասպելական հիմնադիր Արամայիս նահապետի անվան հետ, որը համարվում է Արամենակի որդին⁸²: Արմալիրի հետ է կապվում նաև նրա հետնորդներից մեկի՝ «Հարմայ»-ի անունը, որի որդին է Արամը: Նույն այս տեղեկությունները պահպանել է Մովսես Խորենացին, որը, ըստ երևույթին, օգտվել է նույն աղբյուրից: Մովսես Խորենացու բերած ավանդության համաձայն, Արամանակի որդի Արտամայիսը «շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առեղերբ գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Արմալիր»⁸³: Մովսես Խորենացու մոտ ևս Հարմայի անունը կապվում է Արմալիրի հետ, իսկ Հարմայի որդին է Արամը, որի անունով էլ «զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմէնիկք»⁸⁴: Ինչպես տեսնում էնք, բոլոր այս անունների հիմքում ընկած է «Արիմ-Արմեն» ցեղանունը և ենթադրել են տալիս, որ Ուրարտուի պետության բուն երկիրը՝ Բիաինիլին կոչվել է նաև Արամալի-Արմարիլի-«Արամայր-իլի», որ «Արմինա» կամ «Արմենիա» անվան տարբեր ձևն է հանդիսանում:

Սակայն հարցը սրանով չի փակվում: Սարգոն Բ-ի մ. թ. ա. 714 թ. արշավանքին նվիրված արձանագրության մեջ, հիշատակելով Արմարիլի երկիրը իբրև Տուշպա (Վան) մայրաքաղաքի գավառից ղեպի արևելք գտնվող տերիտորիա, նրան հարեան՝ ղեպի հարավ, հիշատակվում է Այադու կամ Այդու երկիրը, որտեղով ասորեստանյան բանակը շտապում էր անցնել Ուրարտուի թագավորության սահմանները, մտնելու սահմանամերձ նաիրի և Խուբուշկիա երկրները: Ասորեստանյան բանակի երթուղու ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ Այսդու կամ Այդու երկիրը տեղադրվում է Հայոց ձոր կամ՝ Խրուանդունիք գավառի տերիտորիայում, որի հետ են կապվում հայկական ավանդությունները հայ ժողովրդի առասպելական նախահայր Հայկ նահապետի և նրա տոհմի բնակության վեպի մասին: Այս հանգամանքը թույլ է տալիս պնդելու, որ մեզ հետաքրքրող անվան մեջ առաջին Այձ մասնիկը կարող էր կարդացվել Haya, և Hayadu կարող է հոմանիշ լինել «Հայք» (որտեղից և «Հայոց ձոր») անվան:

Այսպես, ուրարտական պետության փլատակների վրա կաղմավորվեց հնադույն հայկական պետությունը, որով և նշանավորվում է հայ ժողովրդի ձևավորման ընթացքի ավարտի սկիզբը: Ցեղերի միմյանց խառնվելու պրոցեսները սկսեցին գերակշռել նրանց տրոհվելու և տարբերվելու պրոցեսների հանդեպ: Այդ ժամանակաշրջանում հատկապես ուժեղանում է հայերի կողմից հայերի միավորման մեջ մտնող ժողովուրդներին և ցեղերին միաձուլելու պրոցեսը:

81 Նույն տեղում: «Արամայր» անվան մեջ «այր» մասնիկը պիտի համապատասխան լինի վրացերեն ვაი «էրի» բառին, որ նշանակում է «ժողովուրդ», ըստ իս «Արամ-այր» բառացի եղանակում է «Արամի ժողովուրդ» — «արամազենայք»:

82 Մ. Խորենացի, Ա, ԺԲ, էջ 39:

83 Նույն տեղում, էջ 42:

84 Նույն տեղում:

Բաղմատեսակ այդ պրոցեսների արդյունքը եղավ այն, որ ազգակից ցեղային լեզուներով ու բարբառներով ներկայացված հայոց լեզուն դարձավ տիրապետող լեզու:

Խոսելով հայկական պետության ծագման մասին, հարկ է ընդգծել սկզբունքային այն խոր տարբերությունը, որ գոյություն է ունեցել հին Արևելքի պետությունների՝ Ասորեստանի, Բաբելոնի, Ուրարտուի և այլոց ու սրանց փոխարինելու եկած պետությունների՝ Մեդիայի, Հայաստանի և Պարսկաստանի միջև: Ուրարտական պետությունը առաջացել է Տուշպա-Բիաինիլի-Վան քաղաքի երկրագործական-անասնապահական օաղիսի ղարդացած քաղաքային համայնքի հիմքի վրա և իրենից ներկայացնում էր հնադանդեցված ցեղերի ու երկրների ազդավարչական մի բոնի միություն, երկրներ, որոնցում ուժեղ էր հակադրությունը նվաճողների և նրանց կողմից շահագործվող ցեղերի ու ժողովուրդների միջև: Հավանորեն, դրանով պիտի բացատրել այն փաստը, որ Հայկական լեռնաշխարհում իրենց երեքհարյուրամյա տիրապետության շրջանում ուրարտեյիս այնպես էլ չհաջողվեց տարածել իրենց լեզուն նվաճված տերիտորիաների վրա և ստեղծել էթնիկական մի մեծ միավորում: Մինչդեռ հայկական պետությունը սկզբնավորվեց տերիտորիալ ցեղային միությունների հիման վրա: Գրեթե մասնավորապես պիտի բացատրել այն փաստը, որ հայկական պետությունը բավականին արագորեն տարածվում է Հայկական լեռնաշխարհի տերիտորիայի վրա, շնայած այն բանին, որ արտաքին քաղաքական պայմանները (մեղական պետության հզորացումը) դրան չէին նպաստում:

* * *

Իր «Անաբազիս»-ում Քսենոփոնը պատմում է, որ թվով 10.000 նահանջող հույները, անցնելով Կարդուխների երկրով, հասնում են մինչև Տիգրիսի վտակ Կենտրիտես գետը, որը «կազմում է Հայաստանի և Կարդուխների երկրի միջև ընկած սահմանը» (Xen., Anab., IV, 3, 1): Կենտրիտես էր կոչվում Արևելյան Տիգրիսի ստորին հոսանքը (հայկ. Ջերմ գետը, հիմա՝ Բոհատան-սու) այժմյան Սղերգի շրջանում: Հասնելով այդ գետին, պատմում է Քսենոփոնը, հելլենները դիմացի ափում տեսան Հայաստանի սատրապ Օրոնտեսին՝ արմենների, մարգերի և խալդայների վարձկան ղորքերով (IV, 3, 4):

Կենտրիտես գետը, ուրեմն, եղել է Հայաստանի հարավային սահմանը, որը նրան բաժանել է Կարդուխների երկրից: Կենտրիտեսից և Կարդուխների (հայկ. Կորդուաց) լեռներից հյուսիս գտնվում էր ասորեստանյան աղբյուրների նախնական երկիրը, որը համապատասխանում է Հերոդոտի Պակտիկեին (III, 93) և Մեծ Հայքի Մոկքին: Ուրեմն այդ տերիտորիան եղել է Հայաստանի՝ Կարդուխներին սահմանակից նահանգը, որի կառավարիչն էր Օրոնտեսը:

Այնուհետև հույները, անցնելով Կենտրիտես գետը, բարձրացան Բաղադեշ (այժմ Բիթլիս-սու) գետով, որը նրանք ընդունեցին Տիգրիսի տեղ: Հասնելով Բիթլիս-սուի ակունքները, նրանք անցան Չորապահակով (այժմ Բիթլիսի լեռնանցք) և մտան Տարոնի (Մշո) դաշտ, որով անցնում է Քսենոփոնի (IV, 4, 3) կողմից Տելեբոաս անվանված Մեղ կամ Մեղրագետը (այժմ՝ Կարա-սու): «Այդ վայրը, — Քսենոփոնի ասելով, — կոչվում է Արևմտյան Հայաստան և նրա կառավարողն էր Տիրիբազը» (IV, 4, 4):

Այս վերջին տեղեկությունը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ եթե Տարո-
նը համարվում է Արեմտյան Հայաստան, ապա դեպի արևելք բնկած Վանի դո-
գափորությունը ուրախական էսլախայի բիախնիլի-Արմալրիլին պետք է լի-
նեք Արեւելյան Հայաստանը, որը Քսենոփոնը պարզապես անվանում է «Արմե-
նիա»⁸⁵:

Խորհնացու մոտ պահպանված ավանդությունը Հայոց ձորի և այնտեղ առաս-
պելական նախահայր Հայկի կողմից կառուցված Հայք (այժմ Խէք դուղը) ամ-
բոցի մասին հիմք է տալիս ենթադրելու, որ սկզբնական շրջանում իրենք՝ հա-
լերը «Հայք» էին անվանում այս Արմենիան (Բիախնիլի-Արմալրիլի երկրա-
ւաստ):

Անկապած, այս Արմենիայի կազմումն էր Կենտրիտեսի (Բոհոտան-սուի)
հովիտը, որտեղ Հայաստանի սատրապ Օրոնտեսը հանդիպեց հույներին:

Այդ տերիտորիայի վրա միակ վայրը, որ կարող էր լինել երկիրը կառավա-
րողի կենտրոն, նույն Վանն էր՝ Տուշպան, և բնական է համարել, որ Ուրարտուի
անկումից հետո կազմավորված հայկական պետության մայրաքաղաքը կարող
էր լինել հենց Տուշպան: Այստեղ պետք է լինեիր Օրոնտեսների՝ Երուանդունիների
գինաստիայի առաջին հաջ թագավորների և նրանց հաջորդած Երուանդ Սակա-
ւակեացի և նրա սրբի Տիգրան Երուանդանի զահաճիստ կենտրոնը:

Վան-Տուսպի շրջանը և Հայոց ձոր-Երուանդունիքը, ինչպես տեսանք, պահ-
պանել են տեղեկություններ այդ վայրերում Երուանդունիների գինաստիայի
զուլաթյան մի քանի քաղ:

Անուղղակի մի շարք տվյալներ բերում են այն եզրակացության, որ Երու-
անդունիների գինաստիան ծաղկել է Մատինենին-Մանային սահմանակից Ար-
դինի-Մաստսիր երկրի տերիտորիայից, որի հյուսիս-արևմտյան բարձր լեռ-
նային մասը մտնում էր Ուրարտուի, ավելի ուշ՝ Հայաստանի կազմի մեջ: Պլի-
նիոսը (NH, VI, I, 18) այդ երկրամասում հիշատակում է Oroandes ցեղը, որ
ապրում էր Կավգամեյա բազարից արևելք, զա համընկնում է ժամանակակից
Սեանդուզի շրջանին⁸⁶: Հ. Մանանդյանի կարծիքով այդ Օրոնտեսների (ճիշտ բն-
թերցումն է՝ Օրոտնդների) հետ պետք է որ կապ ունենա Վասպուրականի զա-
վաճողներից մեկի՝ Արտանիստիլի (Երուանդունիների)⁸⁷ անունը: Այդ գավառը կոչ-
վում էր նաև Հայոց ձոր և գտնվում էր Վան բազարից հարավ՝ Հայոց ձոր
(Խոշոր) գետի հովտում: Երուանդունիների նախարարական տոհմը, այդ զա-
վաճի ժառանգական խշտանները զուլաթյան անելին պետև մ. թ. VII դարում⁸⁸:

Սր հատկապես Երուանդունիները ծաղկում էին Մաստսիր-Արդինի երկրա-
մասից, մենք անենք մի անուղղակի ցուցմունք: Պերդամոն բազարում XIX դա-
րում հայանորերվել է հանաբեն արձանագրություն, որտեղ հիշատակվում է
Արմենիայի սատրապ, իսկ հետո իբրև Մլտսիայի սատրապ Օրոնտես-Երուանդը
(մ. թ. ա. V—IV դդ.): Արձանագրությունը հաջորդում է, որ նա բակարիական

⁸⁵ Ինչպես ճիշտ գիտում է Գ. Տիրացյանը, այս «Արմենիան» այն ժամանակ չի կոչվել
«Արեւելյան Արմենիա», ինչպես կարծում են սուսանափրոգներին ամենք: Տե՛ս նրա նշվ. աշխ.,
էջ 64:

⁸⁶ Հ. Մ. Մանանդյան, Պատմական աշխարհագրական մանր հետազոտություններ, Երևան,
1945, էջ 28:

⁸⁷ Մ. Ս. Երեմյան, Հայաստանը բռն «Ախարհագրաց»-ի, էջ 51:

⁸⁸ Հ. Մ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 51:

ծաղում ունի⁸⁹։ Առաջին հայացքից անհեթեթ թվացող այս փաստը գտնում է իր բացատրությունը Հարկավոր է հիշել, որ Բակտրա քաղաքը և Բակտրիանա երկիրը կոչվել են նաև Ճարիտսպա։ Այս անվան հետ է աղերսակցվում Հայաստանի Զարաուսպ լեռան անունը։ Վերջինս այժմյան Սիահ-Կուհ գագաթն է՝ 3497 մետր բարձրությամբ⁹⁰ և գտնվում է Կսիիշինի լեռնանցքից հարավ, այսինքն այն տերիտորայի վրա, որտեղ տեղադրվում է Արդինի-Մուսասիր երկիրը և Պլինիոսի մոտ հիշատակվող Oroandes ցեղի բնակության տերիտորիան։ Միայն Զարաուսպ անունը չէ, որ աղերսակցվում է Միջին Ասիայի հնագույն ժամանակաշրջանի տեղանունների հետ։ Դրանց թվին է պատկանում նաև Վարազ լեռան անունը։ Հիշենք, որ բակտրիացի է կոչվում նաև Դարեհ Ա՝ Վշտասպյանի (522--486) ժամանակակից, նրա զորավարներից մեկը՝ «Բակտրիայի» սատրապ Դադարշիսը։ Պերդամոնի արձանագրության «Բակտրիան», անշուշտ, առաջ է եկել «Զարաուսպ» անվան նույնացման հողի վրա, ուստի այս Դադարշիսը ևս պիտի ծագած լինի Երուանդունի տոհմից։

Հետաքրքրական է, որ մեղական և հին հայկական դինաստիաները դուրս եկան հենց այդ Մատինենից, որը համապատասխանում է Մանա երկրին և նրան հյուսիս-արևմուտքից սահմանակից Արդինի-Մուսասիրին, ինչպես և ուրարտական դարաշրջանի Պարսուա (Պարսուաշ, երկիրը։ Ասորեստանյան մ. թ. ա. 642—639 թթ. սեպագիր աղյուսակում հիշատակվում է «Կյուրոս, թագավոր Պարսուաշ» (Վ. Վ. Ստրուվեի կարծիքով նշանավոր Կյուրոսի պապը), իսկ Սարգոն Բ-ի ժամանակադրություններում մեղական պետության հիմնադիր Դեյոկն-նր համարվում է Մանա երկրի իշխողը։ Երանոս ակադեմիկոս Վ. Վ. Ստրուվեն եզրակացնում է, որ «մեղական ցեղերին համահավասար պարսկական ցեղերն էլ պատմության հնագույն ժամանակաշրջանում բնակվել են Հայաստանին անմիջապես մերձակա վայրերում»⁹¹։

Այդ ժամանակաշրջանի համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայերի և մեղացիների փոխհարաբերության հարցը։ Դա իր արտացոլումն է գտնել հայկական էպոսում, բանահյուսության մեջ և լեզվում։ Այդ փոխհարաբերություններն անցնում են երեք շրջան⁹²։

Առաջին շրջանը բնորոշվում է դաշնակցային հարաբերություններով՝ Մեդիայի հետ։ Հայկական ցեղապետներն իրենց զինվորական սաշխարհագրորեն ժառանգում են մեղական թագավորների ռազմական արշավանքներին։ Այդ «դաշինքը» ցեղապետներին հնարավորություն էր տալիս վեր բարձրանալու իրենց ցեղակիցներից և զրավելու իշխանության բարձունքները։ Ռազմական այդ դաշինքի շնորհիվ առանձին դինաստիաներ ճանաչվում էին թագավորներ՝ իրենց ցեղակիցների վրա ժառանգաբար կառավարողներ։

⁸⁹ Th. Reinack, La dinastie de Commagene (L'histoire par les monnaies), Paris, 1890, էջ 236։

⁹⁰ Տե՛ս նաև Գ. Տիրացյան, նշվ. աշխ., էջ 61, 69։

⁹¹ Վ. Տ. Ստրուվե, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 51։

⁹² В. В. Струве, Арийская проблема, «Советская этнография», VI—VII, М.—Л., 1947, էջ 118—120։

⁹³ И. М. Дьяконов, Последние годы Урартского государства по ассирийско-вавилонским источникам, ВДН, 1951, № 2, էջ 34։

Այդ շրջանում հայերի և մեղացիների միջև գոյություն ունեցած սերտ համագործակցությունը ուղղված էր առաջին հերթին Ասորեստանի և Ուրարտուի դեմ: Ավելին, մեղական թագավորների քաղաքականությունը նպաստում է հայ լիթնոսի տարածմանը Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում: Ինչպես ցույց են տալիս անուղղակի տվյալները, մեղացիների հետ միասին երկրի ռազմա-ստրատեգիական կետերում տեղակայված էին նաև հայկական զորքերի կայազորներ: Ժամանակի ընթացքում այդ վայրերում ստեղծվում է հայ բնակչության կորիզը: Միայն թիկունքի ապահովման այդպիսի պայմաններում մեղացիները կարող էին Փոքր Ասիայում հաջող կերպով պատերազմել Լյուդիայի դեմ (589—585 թթ. մ. թ. ա.), որը, ինչպես հայտնի է, ավարտվեց մեղացիների հաղթությամբ:

Ինչպես երևում է, մեղական պետությունը այդ հեռավոր սահմանային տարածությունը իր իշխանության տակ էր պահում դաշնակից հայերի օգնությամբ, որոնք այդ մասում փոյուզիացիների ուղղակի հարևաններն էին: Հենց այդ հայերի հետ էլ ծանոթացան հույները, որոնք հույն գրողների ինֆորմատորներն էին:

Այդ փոխհարաբերությունների երկրորդ շրջանը բնորոշվում է նրանով, որ հզորացած Մեդիան միտում է կեղեքել իր երեկվա դաշնակիցներին: Այն բանից հետո, երբ Մեդիան տիրեց բոլոր հաղորդակցական ուղիները Եփրատի վրա, Արաքսի հովտում և Միջագետքում, հայոց թագավորը պիտի ճանաչեր մեղական թագավորի գերիշխանությունը և ամեն տարի հարկ վճարեր 50 տաղանդ չափով (մ.տավորապես 1632 կգ արծաթ), ինչպես նաև նրան պիտի տրամադրեր 20.000 հետևազոր և 4.000 հեծելազոր: Նախկին դաշնակցային և բարեկամական հարաբերությունները փոխարինվեցին թշնամական հարաբերություններով: Հայաստանն օգտվում է հարմար առիթից, որպեսզի ապստամբի Մեդիայի դեմ: Հայկական էպոսում և բանահյուսության մեջ արտահայտություն է գտել «վիշապազուն» մար Աթահակի դեմ ուղղված այդ պայքարը, որ մղում էին Երվանդ Սակավակյացը և նրա որդի Տիգրանը: Որպես վերջինիս որդու ավանդությունը պատկերում է ամպրոպի և կայծակի աստված Վահագն Վիշապաքաղին, այսինքն՝ մեղացիների դեմ կռվողին⁹³:

Երրորդ շրջանը, երբ Հայաստանը պիտի մտներ մեղական պետության կազմի մեջ, սակայն չավարտվեց: Մեղական պետության սկիզբ առած քայքայման հետևանքով մեղացիները չկարողացան նվաճել Հայաստանը: Ըստ «Կյուրոպեդիա»-ի (II, 4, 12, III, 3, 5), տակավին այն ժամանակ, երբ Կյուրոսը մեղական թագավոր Աստիագեսի (այսինքն՝ մինչև 558 թ. մ. թ. ա.) զորապետներից մեկն էր, ապստամբում է հայկական թագավորը, որի անունը չի բերվում (սակայն, ըստ հայկական պատմական և էպիկական ավանդությունների նրա անունը, ինչպես վերը տեսանք, «Երուանդ» էր) և հրաժարվում է հարկ վճարել և զորք տրամադրել մեղական թագավորին: Այդ ապստամբությունը ճնշվում է Կյուրոսի օգնությամբ: Սակայն շուտով Կյուրոսն ինքն ապստամբեց Աստիագես թագավորի դեմ և եռամյա պայքարի ընթացքում (553—550 թթ. մ. թ. ա.) կործանեց մեղական պետությունն ու դարձավ հին պարսկական պետության հիմնադիրը (550 թ. մ. թ. ա.):

⁹³ Մ ա ն ու կ Ա Ր Ե Ղ Յ Ա Ն, Հայ վիպական բանահյուսություն, Երկեր, Ա, Երևան, 1966, էջ 72—93, 97—115: «Վիշապաքաղ» բառացի պիտի նշանակի «քաղ» (արու այծ) վիշապի տուտով:

Հենց այդ ժամանակ էլ Հայաստանն անջատվեց Մեդիայից: Ինչպես ասում է հայկական էպոսը Մովսես Խորենացու (Ա, իդ) հաղորդմամբ՝ Տիգրանը «Կիրոսի աջակցեալ, Վարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն»⁹⁴:

Մեդիային լիակատար ստրկանալու վտանգից ազատված Հայաստանը շուտով, սակայն, պետք է այդօրինակ պայքար սկսեր նաև Կյուրոսի հաջորդների դեմ:

Գիտության մեջ քիչ է ուսումնասիրված Հայկական լեռնաշխարհի տերիտորիայի վրա մեդացիների տարածման հարցը, որ տեղի ունեցավ ուրարտական պետության անկումից հետո: Նվաճված ու իրենց ենթարկված երկրները մեդացիները ձգտում էին իրացնել այդ երկրներում իրենց զինվորական բնակավայրերը հիմնելու և տեղական ցեղերին այլ վայրեր գաղթեցնելու միջոցով:

Ցեղանունները և տեղանունները մեզ հարուստ նյութ են մատակարարում որոշելու մեդական ցեղերի տարաբնակեցման տերիտորիան, ցեղեր, որոնք հայանի են տարբեր անուններով՝ մար, մարդ, մուդ, ամադ և այլն:

Մանավանդ բազմաքանակ էր մարդերի ցեղը, որը զբաղեցնում էր Ուրարտուի կենտրոնական շրջանները: Այստեղ նրանք սփռվեցին Վանից արևելք ընկած տերիտորիայում և կողք-կողքի ապրում էին հայերի հետ: Հայոց ձոր (Խոշաբ) գետի ստորին հոսանքը զբաղեցնում էին հայերը և նրանց անունով էլ այդ գետի հովտի ստորին մասը կոչվում էր Հայոց ձոր. նրա վերին հոսանքի շրջանը, սկսած Օրդոք գյուղից⁹⁵, զբաղեցնում էին մարդերը, որոնց անունով էլ Հայոց ձոր գետի հովտի վերին մասը հայերի մոտ կոչվում էր Բուն Մարդաստան: Մարդերի մյուս մասն ապրում էր Մակուից արևմուտք, զբաղեցնելով մի գավառ, որը հայերին հայտնի էր Մարդուցայք անունով: Մարդերի երրորդ մասը զբաղեցնում էր Արաքս գետի ակունքների շրջանի տերիտորիան՝ Բյուրակն լեռան հյուսիսային լանջերում: Նրանց զբաղեցրած տերիտորիայից առաջացավ Մարդաղի գավառը: Բայց մարդերի ցեղը զբաղեցնում էր նաև Արածանու հովտի լեռնային բարձունքները: Մարդերը երկար ժամանակ պահպանեցին իրենց ցեղային առանձնահատկությունները, սակայն վերջիվերջո ձուլվեցին հայերի մեջ:

Մանեացիների (մատիենների) ցեղը, հավանաբար, ապրում էր Կապուտան (Ուրմիա) լճի արևմտյան ափերում և Բարձր Հայքում, որտեղ նրանց անունով այժմյան Թուզլու գետի (հնում Մանաղի կամ Մանանաղի գետ) հովիտը կաղմում էր հատուկ գավառ՝ Մանաղի կամ Մանանաղի գավառը: Ըստ երևույթին մանեացիները բավականին շուտ ձուլվեցին հայերի մեջ:

Մեդական ցեղերը նշանավոր տեղ էին զբաղում Արաքսի հովտում: Բայց դրանք զլխավորապես մեդացած խուրհներ էին (միտանիացիներ), որոնք հույն հեղինակների մոտ հայտնի են Մեդացի անվամբ: Արաքսի գաղտնի լինակվող ուրարտների մնացորդները, որոնք Հերոդոտի (III, 94; VII, 79) հաղորդմամբ կոչվում են ալարոդներ, գտնվում էին մարերի՝ մեդացիների մեջ լիակատար ձուլվելու ճանապարհին, երբ վրա հասավ հաջորդ շրջանը (Աքեմենյանների և հույն-մակեդոնական նվաճումների նախօրյակին) հենց իրենց՝ մեդական ցեղերի հայերի մեջ ձուլվելու ժամանակաշրջանը: Դատելով հայկական

⁹⁴ Մովսես Խորենացի, էջ 71:

⁹⁵ Օրդոք, ինչպես և Որթք, Որդորու, Որդսպու տեղանունների մեջ պահպանվել է ուրարտացիներ նշանակող էթնիկական անունը:

աղբյուրների տվյալներից, «մարերը» նույնիսկ հայ Արշակունիների (I—IV դդ.) ժամանակ գերակշռող տեղ էին գրավում Արաքսի և նրա վտակների միջին հոսանքի աջափնյակի լեռնաստանում: Մեղական ծագում ունեցող Մարդպետական և Մուրացյան Մուրացյան նախարարական տները ղբաղեցնում էին մեծ տիրիտորիա՝ Նախիջևանից և Մակուից սկսած մինչև Վան: Այդ ժամանակ նրանք արդեն գտնվում էին հայերի մեջ վերջնականապես ձուլվելու ճանապարհին: Նույնիսկ Ղևոնդը (VIII դ.) Գողթան գավառի բնակավայրերը ըստ ավանդության անվանում է «ղաւանս Մարաց»⁹⁶: Տվյալ դեպքում նկատի է առնված այժմյան Օրդուբադի շրջանի տերիտորիան, որի բնակչությունը մինչև այժմ էլ իր լեզվի մեջ պահպանել է մի քանի բնորոշ առանձնահատկություններ և, ի տարբերություն մյուս հայերի, մինչև վերջերս կոչվում էր «ղոկ»: Հայկական լեռնաշխարհի հնագույն էթնիկական կազմավորման՝ խորիների (միտանիացիների, մատիենների, մանեացիների) մնացորդները տիրապետող դիրք էին գրավում բարձր լեռնային շրջաններում, նախկին Մուսասիրի տերիտորիայում, այժմյան Իլևանդուղի շրջանում: Հայերն այդ երկիրն անվանում էին «Արաց ամուր աշխարհ»⁹⁷: Ավելի ուշ այդ մատիենները նույնպես ձուլվեցին հայերի մեջ:

Արաքսի հովտի հայացման ընթացքը, որ սկսվել էր տակավին մ. թ. ա. VIII դարում, երբ այստեղ բնակեցված Արաթանիի հովտից եկած հայկական ցեղերը հիմնադրեցին Էրեբունի-Երևան քաղաքը (782 թ. մ. թ. ա.), ուժեղացավ Սեմեյանների՝ հին պարսկական պետության քաղաքական տիրապետության ժամանակ և ավարտվեց հելլենիստական ժամանակաշրջանում:

* * *

Այն դրույթը, որ առաջադրել էր Լեհման-Հաուպտը, իբր թե ուրարտները իրենց անվանում էին խալդեր, իսկ իրենց երկիրը՝ Խալդիա, առաջին անգամ հերքեցին Ֆրիդրիխը՝ լեզվաբանական տեսակետից և Բ. Բ. Պիոտրովսկին՝ պատմա-հնագիտական փաստերով: «Մեր տրամադրության տակ, — գրում է Պիոտրովսկին, — չկա ոչ մի փաստ, որ ցույց տար, թե ուրարտները իրենց անվանել են խալդեր»⁹⁸: Նա բերում է հին պատմիչների վկայությունները, ցույց տալով, որ ուրարտների և մերձպոնտական խալդայների միջև ընդհանուր ոչինչ չկա և որ վերջիններս հենց նույն խալիբներն են: Վերջին ժամանակներս էլ Բ. Մ. Դյակոնովը⁹⁹ ցույց տվեց, որ խալդայների երկիրը ուրարտական սեպագրերում կոչվում է Խալիտու: Կարելի է ավելացնել նաև, որ դեռևս Մինուայի ժամանակ (810—786) Կարինի (այժմյան Էրզրումի) շրջանում, որտեղ ըստ Դիոդորոս Սիկիլիացու և ուրիշ հեղինակների բնակվում էին խալդայները կամ խալիբները, ապրում էր Խալդիրիուլի ցեղը, որը մտնում էր Դիաուխի ցեղային միության կազմի մեջ: Դա մի ժամանկաշրջան էր, երբ ուրարտները դեռևս չէին տիրել նույնիսկ Բյուրական (հավանաբար ուրարտական արձանագրությունների Գուրկու) բարձունքի շրջանը, նրանց զորքերը առաջին անգամ էին թափանցել

⁹⁶ «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց», 1887, էջ 7:

⁹⁷ Տե՛ս 2. Մ ա ն ա ն դ յ ա ն, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ:

⁹⁸ Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 326:

⁹⁹ И. М. Дьяконов, Заметки по урартской эпиграфике, II, «Эпиграфика Востока», VI, 1952, էջ 111—112:

Արաքսի հովիտը, մասնավորապես Բասենի գավառը: Ուստի և մենք հիմք չունենք կարծելու, թե այդ ժամանակաշրջանում ուրարտեների մի մասը վերաբնակվել է այդ շրջաններում: Բ. Բ. Պիոտրովսկու ասելով՝ «Ուրարտեները, որոնք իրենց պետության մեջ չէին կազմում բնակչության մեծամասնություն (որովհետև զենքի ուժով Վանի թագավորությանը միացվեցին Առաջավոր Ասիայի բազմաթիվ մասեր ցեղեր), Ուրարտուի անկումից հետո ոչ մի տեղ չհեռացած, մնացին Վանի շրջանում, պահպանելով իրենց ցեղային անվանումը, որը Հերոդոտոս հաղորդել է հունարեն ալարոդ ձևով»¹⁰⁰: Ուրարտական բնակչությունը մաքուր լիճակում, հավանաբար, իր գոյությունը երկար ժամանակ պահպանեց Վասպուրականի լեռնային բավիղներում, Վան քաղաքի շրջանում և Սասուն-Խուսիում, որտեղ արաբական հեղինակները հիշատակում են ալ-Արտան (ճիշտ ընթերցումը՝ Ալարտան)¹⁰¹ լեռնաբնակ ցեղը: Թովմա Արծրունին սրանց անվանում է «զոեհաճ Ասորոց» և «որոց անուն ինքեանք Սանասնեայք զինքեանս անուանեն»¹⁰²:

Այսպիսով, մեզ հասած փաստերը վկայում են, որ ուրարտեների հիմնական մասը մնաց Բիաինիլիի և Այրարատի տերիտորիայում, երբ այնտեղ սկսվեց հայացման պրոցեսը:

Ժողովուրդների ծագման տեսակետից ուրարտեները հայերի ալլալեզու նախնիներն են, բայց այդ ժողովրդի կազմավորման մեջ նրանք ավելի կարևոր գործոն էին, քան այն ցեղերն ու ժողովուրդները, որոնք խոսում էին հայերենի ազգակից լեզվով: Բարդ և հետաքրքրական հարցերի թվին է պատկանում հայերենի մեջ ուրարտեների ձուլման և հայոց լեզվի վրա նրա թողած ազդեցությունը խնդիրը¹⁰³:

Հայերենի կողմից ուրարտական լեզուն ձուլելու պրոցեսը պատկերացնում ենք հետևյալ կերպ: Մոտավորապես մ. թ. ա. VII դարում ի դեմս Մոկսի բարբառի հայերենը ընդգրկվում է ուրարտեների հետ ունեցած երկարատև փոխազդեցության պրոցեսի մեջ: Ստեղծվում է այնպիսի մի իրավիճակ, երբ միմյանց վրա փոխազդող լեզուներով խոսողների միջև հաստատվում են տիրապետող և ենթարկվող լեզվի հարաբերություններ: Եթե սկզբում տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման տեսակետից ուրարտեները գտնվում էր հայերենին համահավասար լիճակում, ապա հետագայում նա սկսում է ետ մնալ: Արեմենյան շրջանում ուրարտեները դադարում է գրավոր լեզու լինելուց: Այդպիսին մնում է արամեերենը, իսկ ուրարտական գիրը ժամանակի ընթացքում տրվում է մոռացության և դառնում անհասկանալի:

Ընկնելով թույլ լեզվի վիճակի մեջ, ուրարտեներն աստիճանաբար անցնում է որակապես մեկը մյուսից տարբեր երեք շրջան. 1. Նախնական միալեզվություն շրջան, երբ ուրարտեները դեռևս մնում էր իբրև մայրենի լեզու: 2. Երկլեզվային շրջան, որն ընդգրկում է ամբողջ ժողովուրդը: Այդ շրջանում հայերենից կատարված բառային փոխառություններն այնքան շատ են, որ հասցնում են խառնման և խաշաձեման պրոցեսների, ուրարտական թույլ լեզվում բառային

¹⁰⁰ Б. Б. Пиотровский, *Изд. 2-е*, стр. 332;
¹⁰¹ *Տե՛ս 2. Հյուսիսային Հին հայոց տեղի անունները*, Վիեննա, 1901, էջ 55, նաև Գր. Ղափանյան, *Ուրարտուի պատմություն*, էջ 138;
¹⁰² *Թովմա Արծրունի*, Բ, է, էջ 121;
¹⁰³ Այս հարցերով վերջերս զբաղվում է բանասեր պրոֆ. Գ. Բ. Ջահուկյանը (*տե՛ս* Г. Б. Джаукян, *Урартский и индоевропейские языки*, Ереван, 1963, *passim*):

նշանակալից փոխառությունների հետևանքով նրա հին և փոխառյալ բառերը խառնվում են և զուգահեռաբար օգտագործվում միևնույն նշանակությամբ։ 3. Հետագայում միմյանց վրա փոխազդող երկու լեզուների բառային, հնչյունաբանական և նույնիսկ ձևաբանական՝ զնալով ուժեղացող փոխազդեցությունները հասցնում են նրանց խաշաձևման։

Սակայն ուրարտական լեզուն արդեն ոտք էր դրել մահացման ուղի, և խաշաձևման պրոցեսները պետք է աննշան տեղ բռնեին։ Խաշաձևման պրոցեսները թուլանում են, իսկ բառային փոխառությունների պրոցեսները այնքան են ուժեղանում, որ ուրարտերենից դուրս են մղվում հին բառերը, որոնք վերաբերում են բառային հիմնական ֆոնդին։ Հետագայում ուրարտերենը զաղարում է մարդկանց միջև հաղորդակցության միջոց լինելուց և աստիճանաբար կորցնելով իր գլխավոր ֆունկցիան, դառնում է նեղ շրջանի լեզու։ Այդ լեզվով էն դեռևս խոսում ավագ սերնդի ներկայացուցիչները, իսկ նոր սերունդը զնալով սակավ է օգտագործում և հասկանում այդ լեզուն, ուրարտերենը աստիճանաբար մահանում է։

Կազմավորված հայ ժողովուրդը ժառանգեց ուրարտների ոչ միայն մշակույթը, այլև շինարարական տեխնիկան, որի մասին են վկայում նյութական հուշարձանները։ Հայոց լեզուն հարստացավ նաև ի հաշիվ ուրարտերենի, առավելապես բառային ֆոնդի բնագավառում։ Դ. Ա. Ղափանցյանը և Ս. Ս. Ղարիբջանը (իսկ հետո նաև Ի. Մ. Դյակոնովը և Գ. Բ. Զահուկյանը) պարզեցին և հայերենի մեջ ուրարտական բառապաշարի բազմաթիվ հետքեր¹⁰⁴։

Շղափելով այդ հարցը, Ի. Մ. Դյակոնովը գրում է. «Հաստատ կարելի է պնդել, որ հայերենում ոչ-հնդեվրոպական բառապաշարի գրեթե ամբողջ մեծ շերտը գալիս է ուրարտերենից։ Երկու հարյուրից մի փոքր ավելի ուրարտերեն բառերից, որոնց նշանակությունը այժմ մեզ հայտնի է ոչ բավարար շտուկայամբ, զգալի տոկոս են կազմում այն բառերը, որոնք հայերենում ևս նույնն են»¹⁰⁵։ Նույն նմանությունն է նա նկատում նաև հնչյունաբանության մեջ։ Ի. Մ. Դյակոնովը կարծում է, որ «հայոց լեզվի հնչյունաբանական համակարգը

¹⁰⁴ Օրինակ, հայերենի մեջ են մտել այնպիսի ուրարտերեն բառեր, ինչպիսիք են՝ ebanu — երկիր — հայերեն ավան (բնակավայր, մեծ գյուղ), վրաց. ubani, մեգր. abani — գյուղ, գյուղի մի մասը. eure (ewre) — տիրակալ — հայերեն աւր (արի) — տիրակալ, հայերեն բառերում հանդես են գալիս իրրե մասնիկ՝ արեար. արի — եար — ավագանի, հեծյալներ՝ ցեղային ավագանու ներկայացուցիչներից. հմմտ. արի — որդի — աղնվացեղ ժառանգորդ (ավելի ուշ՝ աղնվական աղջիկ), ušule — գինի — հայերեն տոլի (տոլի՝ վայրի խաղող՝ նույնն է, ինչ որ ուտիերեն տոլ բառը), mese — հարկ, տուրք — մեր կարծիքով այդ բառը պահպանվել է հայերեն մշակ և վրացերեն օշթავո մուշակի բառերում՝ «շահագործվող մարդ, աշխատավոր, ստրուկ»։ Նշանակությամբ, Այդ բառից է կազմված՝ մշակութիւն, տաժանակիր աշխատանքներ, ստրկական աշխատանքներ կատարելը (sue — ծով, լիճ — հայերեն ծով (ծով, լիճ), hube — դաշտ — հովիտ, pile — ջրանցք — (հայերեն պեղեմ — փորել), ueie — գունդ, գորամաս — հայերեն զեղ, զեւղ (գյուղ), գյուղացիների աշխարհագրոր, ulh — ջրի հոսանք — հայերեն ուղիս (գետի հոսանք, հորձանք, գետավտակ և գետի ակունքներ, ջրանցքի սկիզբ, kape — հացահատիկի չափ և հայերեն կապիճ (հացահատիկի չափ, նախապես՝ խորձ), arsihi — հայերեն արծիվ. patare — քաղաք, պարսպապատված տեղ — հայերեն պատ (ցանկապատված տեղ (հանդիպում է եղիպատրուշ, Պատրինջ և այլ աշխարհագրական անուններում), sare — ծառ, անտառ — հայերեն ծառ և այլն։

Ուրարտական լեզվից, անշուշտ, ավելի շատ բառեր պետք է պահպանվեին հայերենում, — գրում է Գ. Ղափանցյանը, — սակայն գրավոր նյութ չկա, իսկ ուրարտական այդ բառերի մի հայտնի մասը մնում է անհասկանալի» (Գ. Ղափանցյան, իշվ աշխ.)։

¹⁰⁵ Տե՛ս ВДИ, 1954, № 3, էջ 94։

բացահայտորեն ուրարտական բնույթ է կրում, որը վկայում է անցյալում լայնարձակ տերիտորիայի վրա հայ-ուրարտական երկլեզվային երկարատև համագոյակցության մասին»¹⁰⁶։

ПЕРВЫЕ АРМЯНСКИЕ ГОСУДАРСТВЕННЫЕ ОБРАЗОВАНИЯ (VII—VI вв. до н. э.)

Академик АН Арм. ССР С. Т. ЕРЕМЯН

(Р е з ю м е)

После походов Саргона II в 714 г. до н. э. среди отпавших от Урарту земель южнее Армянского Тавра, без сомнения, ведущее место занимала Арме-Шуприа, к ней тяготели территории, расположенные в долине Восточного Тигра—область Напри-Хубушкна, которая довольно рано была арменизована. Из Напри-Хубушкин армянские племена проникали в центральную область Урарту, и понятие Бианили все больше суживается, сведясь к городской округе столицы Тушпы (Ван), а остальная часть носит название Армарали или Арамали (Армарилну), что должно быть урартской формой названия Армина, упоминаемой столетием позже в Биситунской надписи.

Таким же образом южнее этой страны область Айаду является другим этническим наименованием армян Нау в урартском звучании.

Страна Арме-Шуприа быстрее, чем другие части Армянского нагорья, от стадии замкнутого развития высокогорных скотоводческих районов с развитой индустрией бронзы перешла к стадии перехода к интенсивному земледелию, в соединении со скотоводством и освоением железа. И здесь горная зона хиреет и уступает свое место зоне долин и низменностей. Интенсивный рост земледелия привел к сосредоточению населения в долинах и низменностях. С освоением железа тесно связано развитие искусственного орошения и поливного земледелия.

Через Арме-Шуприу государство Урарту участвовало в транзитной торговле северо-сирийских городов железом, поэтому эта территория делается объектом захватнических вожделений Урарту. Этот факт ускорял процессы внутреннего разложения первобытно-общинных отношений и зарождения элементов государственности.

Арме-Шуприа упоминается в анналах ассирийских царей в связи с убийством в 681 г. до н. э. царя Синаххериба. Согласно Библии (Вторая книга царей, XIX, 36—37), убийцы скрылись в стране Арарат. Армянская историческая традиция, сохранившаяся у Мовсеса Хоренаци (I, 23) и в армянском эпосе, еще более уточняет, называя местом убежища убийц древнеармянскую область Санасун или Сасун (на южных отрогах Армянского Тавра), т. е. область Шуприа. Согласно этим же преданиям, в период упомянутых событий 681 г. до н. э. в Сасуне (Внутрен-

¹⁰⁶ Նույն տեղում։

ния Шуприа) княжил Скайорди, имя которого связывается со «скаями», т. е. саками, *гесп.* скифами. Сын этого Скайорди Паруйр (имя его выводится от скифского имени Партатуа—это имя Прототий, в передаче Геродота) со своими армянскими военными ополчениями участвовал с мидийскими войсками в осаде города Ниневии. После падения и уничтожения столицы Ассирии в 612 г. до н. э. этот Паруйр, согласно армянской исторической традиции, был признан царем Армении (по всей видимости, в пределах страны Арме-Шуприа). Дошедшие до нас данные дают возможность утверждать, что после 28-летнего господства скифов в Урарту и в Мидии (в 652—624 гг. до н. э.) в столице Урарту—городе Тушпе (арм. Тосп—Ван) воцарилась армянская династия Ервандуни, которая между 610—585 гг. до н. э. включила в свой состав также царство Паруйра (Арме-Шуприа). Так на бывшей территории государства Урарту образовалось Армянское царство со столицей в Тушпе—Ване, а затем в Армавире. Таким образом, и армянские предания, и эпос возводят основание Армянского царства ко времени возвышения Мидии при царе Киаксаре (625—585) и падения Ассирии (в 612—609 гг. до н. э.). Это древнейшее армянское царство в древнеперсидских и греческих текстах VI—V вв. до н. э. упоминается в форме «Армина» или «Армения», в то время как в аккадских текстах по-прежнему называется «Урашту» или «Урарту», а в пророчестве Иеремии (восходит к 593 г. до н. э.)—«Арабат», что является древнееврейской передачей названия «Урарту».